

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԴԻ ԷԹՆԱՄԸՆԿՈՒԹՅԱՅԻՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱՏԱՋՐՁԱՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅՆԵՐ

ԵՐԵՎԱՆ - 1997

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝

Հ.Տ.Մարության

Դ.Ս.Վարդումյան

Ответственные редакторы

Դ. Ս. Վարդումյան

Ա. Տ. Մարության

«СОВРЕМЕННЫЕ ЭТНОКУЛЬТУРНЫЕ ПРОЦЕССЫ  
В АРМЕНИИ»  
РЕСПУБЛИКАНСКАЯ НАУЧНАЯ СЕССИЯ

I

Тезисы докладов  
(на армянском языке)  
ЕРЕВАН - 1997

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ԼԵՎՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
ՀԱՅԻ


ՀԻՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԵՐԻ ՆՈՐ ԿՑԱՆՔԸ.  
1. ԼԵՆԻՆԸ ՈՐԴԵՍ ՏՐԻՔԱՏԵՐ

1. Կոմունիստական համակարգի վլուգումը գուգորդվում էր համայնավարական գաղափարախոսության և նրա հերոսների փառազրկման բուռն գործընթացով: Բնական է, որ կոմունիստական կուռքերի նման կարճավարյային սրբապրծման առանձնապիս արժանացավ Վ.Ի.Լենինը՝ որպես ամենակլիշեվորված կերպար: Սակայն մեր նպատակը ոչ թե հեղափոխության առաջնորդի դիմապրկումն է, այլ այդ կերպարի առանձինապահական համապատասխանությունները դիտարկելը, ինչը կարող է օգնել հասկանալու ժամանակակից քաղաքական գործիչների երբեմն անկանխագուշակելի և տարօրինակ արարքները: Այդ առումով Լենինի կերպարը զարմանալիորեն համապատասխանում է առանձինական արիքստերին (անգլ. trick = ոռւս. «ΤΡΙΟΚ» բառից):

2. Տրիքստերին նվիրված է բազմաթիվ և հաճախ իրարամերժ գրականություն, ինչը զարմանալի չէ, հաշվի առնելով այդ կերպարի ի սկզբանե հակասական հատկությունները: Այստեղ մենք հետևում ենք Վ.Ն. Տոպորովի (1987) տրիքստերի սիբիրյան (ենիսեյան) տարբերակի ուսումնասիրությանը, որն իրենից ներկայացնում է ինտենսիվ այլ ոչ թե էքստենսիվ բնույթի ուսումնասիրություն, ինչպիսին է տրիքստերին նվիրված աշխատանքների զգակի մասը:

3. Լենինին տրիքստերի հետ է մերձեցնում արգեն այն, որ երկուսն էլ հանդես են գալիս որպես աշխարհը ձևափոխողներ և կուլտուրապետներ՝ մշակույթի տարրեր ներմուծողներ: Ընդ որում, այդ արգում է զվարապետական տրյուկի՝ ճարպիկ հնարանքի օգնությամբ, հմմտ. մարքսիզմի դասականների հեղափոխության տեսության՝ Լենինի կողմից գըլխիվայր շրջումը: Երջումն ընդհանրապես տրիքստերի տիպիկ վարքագիծն է, ինչն առանձնապիս շեշտում է Կ.Ֆ. Յունգը՝ տրիքստերի կերպարի իր հայտնի մեկնաբանության մեջ (1956):

4. Լենինի մյուս տիպիկ տրիքստերյան հատկանիշ կարելի է համարել նրա առանձնահատուկ անսպասելի, «ծուռ» ճանապարհի որոնումները՝ հմմտ. քրեատումատիվական «Մենք կդնանք այլ ճանապարհով» պատանի Լենինի խոսքերը, գեափի ՆէՊ (նոր տնտեսական քաղաքականություն) անսպասելի շրջվելը, և այլն: (Հմմտ., մյուս կողմից, Սասնա Շոերի, առանձնապիս նավթի ծոռնությունը, որն արտահայտվում է նույ-



նիսկ նրա բառացիորեն ծուռ ճանապարհով՝ Մոլլից Սասուն մանուկ հասակում ճամփորդելիս):

5. Լենինի մյուս տրիքստերային հատկանիշն է պատմությունը խորամանկությամբ գերազանցելու, բախտորոշ պահ որոնելու իր մշտական ձգուումը՝ հմմտ. Հոկտեմբերյան հեղաշրջման իրականացման ժամանակի որոշումը. «24-ին շուրջ է, 26-ին՝ ուշ»: (Հմմտ., մյուս կողմից, Մ. Գորբաչովի հակառակ՝ հարմար պահեր բաց թողնելու հատկությունը):

6. Տրիքստերի մեկ ուրիշ կարևոր հատկանիշն է նրա առնչությունն ուտելիքի հետ: Մի կողմից, նա հեքիաթի հերոս հիմարի նման մշտակես սոված է և չափազանց որվամոլ, սակայն, մյուս կողմից՝ հոգում է մարդկանց սննդով ապահովելու մասին: Ասկետիկ Լենինի մոտ դրսեղովում է տրիքստերի երկրորդ առումը. նայ նույնպես մշտակես մտահոգված է ժողովուրդը կերակրելու գերինդրով՝ սկսած հողի (կերակուր ծնողի) դեկրետից, որն, ի վերջո, նրա հերթական տրիքստերյան տրյուկը դարձավ՝ հողը բաժանելուց հետո այն խսկույն ետ վերցրին:

7. Տրիքստերի մշտական սովոր, ուտելու ցանկությունը, նրա ավելի ընդհանուր՝ «ցանկասեր» բանաձևով նկարագրվող հատկանիշի արտահայտման ձևերից է: Այդ մշտական ցանկասիրությունն արտահայտվում է առասպելաբանական տրիքստերի սեքսուալ գերցանկասիրությամբ: Հետաքրքիր է, որ կթե պաշտոնական լենինիանան բացարձակորեն զբարկել էր առաջնորդի կերպարը որևէ սեռագգացությունից (զրան նպաստում էր նաև իր կողմանից արտահայտված սեքսուալ անհրապությունը), ապա պարականոն լենինիանան պատմում է նրա կրքոտ սիրո մասին՝ հանդեպ գեղեցկութիւն Արմանդը: Հմմտ. նաև Լենինի սիփիլիսով՝ սեքսուալ անժումկարության նշանը կրող հիվանդությամբ տառապեկը, չնայած իրականում նա, ամենայն հավանականությամբ, ուներ այդ հիվանդության կենցաղային ձևը:

8. Լենինի հաջորդ տրիքստերյան հատկանիշն իր արտաքինի երկի մաստությունն ու անորոշությունն է. ոչ շատ ծեր՝ ընդհամենը 54 տարեկան հասակում մահցած առաջնորդը, այնուամենայնիվ, «Լենին պապիկ» անունն էր վաստակել, նա հաճախ փոխում էր իր կերպարը կոնսպիրատիվ նպատակով, օրինակ՝ զրահամեքենայի վրայից իր հայտնի ելույթի ժամանակ նա մորուք չուներ, սակայն քրեստոմատիական նկարում պատկերված է մորուքով: Նույնիսկ տրիքստերին բնորոշ ծաղրածուական արտաքինը, կարծեք, հատուկ է Լենինի կանոնացված կերպարին. հիշենք Լենինի ցածրահասակ լինելը, դատաստությունը, կտրուկ շարժումներն ու ժեստերը, վերջապես, մորուքի շիկակարմբավուն դույնը և մշտական կեպկա գլխարկը՝ բոլորը կրկեսի հայտնի շիկակարմբը խեղկատակի կերպարի շտեմարանից:

Միայն մեկ տարբերություն կա երկու քննարկվող կերպարների միջև։ Առասպելաբանական տրիբուտերն իր հաճախ չարդավանքի արդյունքում մարդկանց օգուտ է բերում, նրանց պարզեցով՝ մննդով՝ կյանքով, մինչդեռ Լենինը, ընդհակառակը, ցանկանալով մարդկանց բարիք բերել ի վերջո միայն չարիք բերեց նրանց։

ԼԵՎՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, ԱՐԱ ԳՈՒԼՑՅԱՆ,  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ, ԳԱՅԱՆԵ  
ԾԱԳՈՅԱՆ, ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ  
ՀԱՅԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԾՈՒԿԱՅԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԱԴՐՈՒՄ

1. Վերջին հարյուրամյակում և հատկապես խորհրդային տարիներին հայերի կայուն ինքնապատկերացումներից էր նաև այն, թե առևտուրը հայի չության ավանդական և «քնածին» գծերից է։ Նման ինքնապատկերացումը խորհրդային իրականության մեջ համատեղվում կամ բախվում էր առևտուրի և առևտրականի երկակի գնահատականին՝ կոմունիստական-բացասական և կլանային-դրական։ Դիտելի է, որ մասնավոր առևտուրի օրինականացումից հետո էլ պահպանվեց առևտուրի հանդեպ կոմունիստական դիրքորոշման իներցիան։

2. Խորհրդային կայսրության վլուգումից հետո Հայաստանի ժառանգած շուկան կարելի է կոչել «դատարկ վաճառասեղանների շուկա»։ Իրողությունը և խնդիրները մնում էին նույնը, այլ էր քաղաքական և տնտեսական իրավիճակը և սկզբունքորեն այլ էր լուծումների հնարավորությունը։ Հայաստանն ինքը, առանց որևէ գաղափարախոսական կամ վարչական պարտադրանքի, կարող էր որոշումներ ընդունել, ինքը կազմակերպել իր շուկան։ Զնայած դարձագյան կոնֆլիկտը և շրջափակումը էականորեն սահմանափակում էին գործունեության ազատությունը, որպես նպատակ բացահայտորեն առաջադրվեց հասարակության կողմից հիմնականում ընդունելի և սպասվող՝ ազատ շուկա ստեղծելու գաղափարը։ Պատկերացումների, իրականության և նպատակների նման հակասականությունը պայմանավորեց հայկական շուկայի ձևավորման յուրօրինակ ընթացքն ու կերպարը՝ անցումը ժամանակավոր խմբային առևտուրից («զբոսաշրջիկային»)։ դեպի կլանային առևտուր, ներկրվող ապրանքների առանձնահատուկ աշխարհագրություն և այլն։

3. Շրջափակումը, աշխարհաքաղաքական իրավիճակը, նախնական ոչ մեծ դրամագլուխը թելագրեցին, որ ներկրման առաջնային տարածք

դառնան իրանը, թուրքիան և արաբական երկրները: Ներկրվող ապրանքների ընտրությունը արվում էր հիմնականում եվրոպական համարվող չափանիշների տեսանկյունից և, որ առավել ուշադրավ է, ներկայացվում էր որպես բուն արևմտյան ապրանք (հմմտ. այդ ընթացքում ծնված «ինքն է» հասկացությունը): Երկույթի ազգաբանական քննությունը ցուցում է, որ այն հայերի արևմտամետ պատմա-մշակութային կողմնորոշման և «սպասելիքների» իրավիճակային դրսեորումներից է: Շուկայի ձևավորմանը զուգընթաց՝ շուկայի վրա ազդող գործոն դարձավ ապրանքների «ժողովրդական փորձաքննությունը»:

4. Հայկական շուկայի կերպարի ձևավորման օրինաչափությունների և բացահայտման առումով առաջնային նշանակություն ունի նաև առևտուրի տարածական կազմակերպման և առևտուրական տարածքի կազմակերպման ազգագրական քննությունը (առևտուրական տարածքի ֆիզիկական և հոգեբանական սահմանները, սեղանիկի խանութ, բաց և փակ շուկաներ և այլն): Դիտարկումները թույլ են տալիս վավերացնելու, որ ինքնարուխ ձևավորված առևտուրական կենտրոնները միտում ունեն վերածվելու քաղաքի ժամանակակից կենտրոնների, իսկ խանութները՝ անձնական կամ խավային առևտուրանմշակութային տարածքների:

## ՅՈՒԼԻԱ ԱՆՏՈՆՅԱՆ ԵՊՀ

### ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. Ամեն մի հասարակություն իր գոյատևման ընթացքում պարբերաբար զտնվում է տարբեր, ոչ ստանդարտ իրավիճակներում, ինչպես պատերազմ, սով, բնակչության գաղթ և այլն: Նույնը կարելի է ասել ամեն մի առանձին վերցրած անձնավորության մասին: Այժմ որոշ երկրներում շատ տարածված են հասարակության և անհատի հոգեբանական վերականգնման (ռեարիլիտացիայի) արհեստական մեխանիզմներ: Սակայն ամեն ժողովուրդ մշակում է վերականգնման իր ավանդական ձևերը:

2. Նման ձևերի և մեխանիզմների ցանցը բավականին լայնածավալ է: Այն արտահայտվում է ոչ միայն առանձին երկույթների մեջ, այլ նաև հասարակական որոշ ինստիտուտներում, որոնց մասին խոսք կդնա ստորև:

3. Ամեն մի մեթոդ և մեխանիզմ պիտի ունենա գործելու և ներգործման որևէ ընդհանուր գործիք: Այդ գործիքը սիմվոլն (խորհրդանիշ) է,

որը հոգեբանական ներգործման էֆեկտիվ միջոց է, ինչը հավաստված է սիմվոլի բնույթին վերաբերվող ուսումնասիրություններով:

4. Աշխատանքային, ընտանեկան, պաշտոնական եկեղեցական ծիսակատարությունները մեխանիզմներ են, որոնք կարգավորում են կյանքի բնականոն ընթացքը: Ոչ նորմալ, ոչ ստանդարտ իրավիճակներում այդ մեխանիզմները կամ չեն գործում, կամ գործում են փոփոխված ձևով՝ ի հայտ են գալիս այլ մեխանիզմներ, որոնք, սակայն, գործում են, օգտվելով նույն սիմվոլի սկզբունքից:

5. Այդպիսի մեխանիզմներից է կախարդների, «նայողների» ինտիտուտը, որը պարունակում է հմայողի (շամանի) որոշ հատկություններ: Նրանց գործունեությունը անընդհատ է, սակայն յուրահատուկ իրավիճակներում այն աշխատանում է և ավելի նշանակալից դառնում ժողովրդի համար: Այդպիսի անձնավորությունները միաժամանակ ունեն թե կարգավորիչ, թե հարմարվածության (աղապտացիոն) գործառույթ: Իհարկե, նրանց ներգործումը հասարակության վրա շատ ծավալուն չէ, այն արտահայտվում է ավելի շատ անհատի, քիչ դեպքերում՝ ոչ մեծ համայնքների մակարդակով: Կան նաև նման մեխանիզմներ, որոնք գործում են ավելի լայն չափով (եկեղեցի, աղանդներ), սակայն դրանք դուրս են սույն զեկուցման շրջանակներից:

6. Ի տարրերություն աղանդների, որոնք անհատներին աշխատում են դուրս հանել «հիվանդ» հասարակությունից, «նայողները» աշխատում են հարմարեցնել անհատին հասարակությանը և հասարակությունը՝ անհատին: Նրանք լրացնում են (գուշակությամբ, կախարդությամբ, բուժելով և այլն) բացերն այն ոլորտներում, որոնք առավելապես են տուժում հասարակության անկայուն իրավիճակներում (այսինքն՝ որոնք ապահովում են մարդու անվտանգությունը, պաշտպանվածությունը՝ թե ներքին, թե արտաքին):

7. Եներով այն բանից, որ սիմվոլը կախարդների և «նայողների» գործունեության հիմնական միջոցն է (այն դրսևորվում է ոչ միայն գուշակման, կախարդության տարրեր տեսակների, այլ նաև գործելու ձևերի, հագուստի, տարածքի ձևավորման մեջ), իսկ ներգործումը հիմնականում հոգեբանական է, որի համար հարկավոր են առկա ազդեցության միջոցներ, կարելի է եզրակացնել, որ այս խմբին պատկանող «մասնագետները» ներկա դրությամբ սիմվոլների հիմնական ստեղծող-ձևափոխողներն են: Նրանք ոչ միայն հարմարեցնում են ավանդական սիմվոլիկան ներկա ժամանակներին և իրավիճակին, այլ նաև ստեղծում են նոր սիմվոլներ, հիմնվելով սիմվոլաստեղծագործման ընդհանուր սկզբունքների վրա:

8. Այսպիսով, կարելի է եղրակացնել, որ սիմվոլների ստեղծագործման գործընթացն ունի հոգեբանական ներգործման մեջ հնարավորություններ, որից օգտվողները՝ կախարդները, «նայողները» կրում են էթնոսի հոգեբանական կարգավորման գործառությունները, և որոնց կարիքը մեծանում է արտակարգ (ոչ ստանդարտ) իրավիճակներում:

ՄԽԻԹԱՐ ԴԱԲՐԻԵԼՅԱՆ  
ԱՐՏԱԿ ԴԱԲԱՂՅԱՆ  
ԵՊՀ

ՔԱԾԱԹԱՂԻ ԾՐՋԱՆԻ ՎԵՐԱԲԵՆԱԿԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1. Արցախյան պատերազմը, ի թիվս այլ երկույթների, ձևակորեցնական պատերազմական-մշակութաբանական պեսանլյունից առանձնահատուկ կարևորություն ունեցող այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են ազատագրված տարածքների վերաբնակեցումը, հայացումը, մշակութային վերայուրացումը: Կարելի է փաստել, որ դրանք մեր նորագույն պատմության ամենից ուշագրավ իրողություններն են: Բայ այդմ էլ կարևորվում է դրանց համակողմանի գիտական ուսումնասիրությունը, ինչը, բացի տեսականից, ունի կարեկոր գործնական նշանակություն:

2. Վերաբնակեցման գործընթացն ընդգրկել է ինչպես Արցախի տարածքում գտնվող նախկինում աղբբեջանաբնակ, այնպես էլ դրան հարակից բազմաթիվ ազատագրված բնակավայրեր, որոնցից ամենախոշորները Շուշի և Բերձոր (նախկին Լաշին) քաղաքներն ու մոտ երկու տասնյակ խոշոր գյուղական բնակավայրերն են:

3. Գրաւաված գաշտային-ազգագրական նյութերը, հավաքած վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ նոր բնակեցվող գյուղերում աստիճանաբար ձևակորվում է ամենօրյա կայուն շփումների մթնոլորտ, գյուղը հանդես է գալիս որպես համայնք, մեկ ամբողջական միավոր, առանձնանում են հասարակական, մասնագիտական խմբեր, տարբեր ընտանիքներ կարեռում են այս կամ այն զբաղմունքը, ընդարձակում կամ սահմանափակում հարեւանների հետ ունեցած շփումները և այլն:

4. 1996 թ. հունիսին Քաշալաղի շրջանում բնակվում էր մոտ 3300 մարդ՝ 1150 ընտանիք (մոտ 10% ճշգրտությամբ): Շրջանի և Բերձոր քաղաքի բնակեցման տեմպերն ըստ տարիների տարբեր են. 1994 թ. գարնանը և ամռանը շրջանում եղել է մոտավորապես 300 բնակիչ, որոնցից 50-60-ը՝ Բերձորում: Բնակչության ներհոսքը գագաթնակետին է հասել 1995 թ. գարնանը և աշնանը:

5. Բավականին խայտաբղետ պատկեր է ներկայացնում նաև շրջանի բնակչության կազմն ըստ նախկին բնակության վայրի: Կան Հայաստանի բազմաթիվ մարզերից, Հատկապես նախկին արդյունաբերական կենտրոններից տեղափոխված ընտանիքները: Պատճառները մի քանիսն են՝ տեղական գործազրկություն, պայմանների վատթարացում և այլն: Գյուղական բնակավայրերից տեղափոխվելու պատճառներն են սակավահողությունը, ընտանիքների բազմանդամությունը և այլն:

6. Բերձոր քաղաքում և շրջանի գյուղերում տեղափոխվելու սկզբունքները նույնպես տարրեր են. երբ նույն վայրից տեղափոխվում է մի քանի ընտանիք՝ մեկ կամ մի քանի հոգի նախօրոք լինում են շրջանում, ընտրում հարմար բնակավայր, ապա տեղափոխում ընտանիքը: Ըստ այդում, կարելի է առանձնացնել «Համահավաք» և «Խառը» բնակություն ունեցող գյուղեր: Առաջին տիպի գյուղերում բնակվում են հիմնականում նույն վայրից տեղափոխված ընտանիքները: «Խառը» բնակություն ունեցող գյուղերում սովորաբար հաստատվում են տարրեր բնակավայրերից տեղափոխված ընտանիքներ:

7. Ուշագրավ են նաև հարմարվելու հետ կապված մեխանիզմները, որոնք ընթանում են մի քանի ուղղությամբ՝ բնակավայրերի. Թաղերի հարակից տարածքների անվանափոխումից մինչև «տեղացի» և «Հարեւան» համակարգի ձևավորում, որում որպես «տեղացի» ներկայացվում են շրջանի բնակիչները, իսկ որպես «Հարեւան», հաճախ նաև բացասական որակումներով՝ Քաշաթաղի արոտավայրերից, խոտհարքներից, շինանյութից օգտված և օգտվող հարակից շրջանների գյուղացիները:

8. Ամփոփելով, կարելի է ևս մեկ անգամ փաստել, որ շրջանի, ինչպես նաև բնակեցվող այլ վայրերի ազգագրական ուսումնասիրությունը հրատապ խնդիր է, քանի որ տալիս է հանրապետության անկախությանը հաջորդող ժամանակահատվածում ծավալված որոշ գործընթացներ ձևավորման, զարգացման ու ընթացքի մեջ դիտարկելու լայն հնարավորություններ:

**ԳՅՈՒՂԱՏԱՑԵՍԱԿԱՆ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԻ  
ՍԵՓԱԿԱՆԱՅՆՈՐՀՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՐՈՇ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1991 թ. իրագործված հողի սեփականաշնորհումը բազմաթիվ ու բազմաբնույթ փոփոխություններ առաջացրեց գյուղատնտեսական զբաղմունքներում: Իրանք կապվում էն խորհրդային պետության դրյության տարիներին ձևավորված համակարգերից պլանային տնտեսության քայլքայման ու շուկայական հարարերություններին անցնելու հետ:

1. Հանրապետության տարրեր մարդկում գյուղաված գաշտային-ազգագրական նյութերը թույլ են տալիս գալու այն եղրահանդման, որ զբաղմունքներում կատարված փոփոխությունների հիմքում ընկած է «տնտեսական նպատակահարմարության» սկզբունքը, երբ անհատական գյուղացիական տնտեսությունը կարևորում է այնպիսի մշակաբուսկերը կամ անասնապահության այն ճյուղերը, որոնք տալիս են գյուղմթերքների ավելցուկը շուկայական հարաբերությունների ոլորտը ներդրաբելու, վաճառքի կամ ապրանքափոխանակության ճանապարհով ընտանիքի կարիքները բավարարելու հնարավորություն: Կարենոր գործոն են նաև թունաքիմիկատների, պարարտանյութների, վառելանյութի առկայությունը, տրանսպորտային հնարավորությունները, հողահանդակների չափերն ու կորվածությունը, միմյանցից հեռավորությունը և այլն:

2. Կատարված փոփոխությունների արդյունքում որոշ գյուղմթերքներ ձեռք են բերում «ապրանքային նշանակություն», ըստ այդմ, անհատական գյուղացիական տնտեսությունը կարևորում է հիմնականում դրանց մշակությունը: Ավելի հստակորեն են առանձնանում նաև «մասնագիտացած» շրջաններն ու գյուղերը, որոնք հանդես են գալիս որպես այս կամ այն մշակաբույսի հիմնական մատակարար: Այսպես, Արարատյան դաշտի գյուղերը բանջարաբուտանային մշակաբույսերի ու մրգի հիմնական մատակարար են, Գեղարքունիքի ու Շիրակի մարզերը, մասսամբ Լոռու մարզը կարտոֆիլի մատակարարներ են: Իրացման տարրերակներն են՝ վաճառքը՝ խոշոր քաղաքներում և ապրանքափոխանակությունը՝ գյուղական բնակավայրերում: Նշենք նաև, որ որոշ մշակաբույսերից հրաժարվելը կապվում է պլանային տնտեսության պարտադրած «հարկադրական մասնագիտացման» վերացման, արտադրական հզորությունների փոշիացման հետ: Շաքարի ճակնդեղի մշակությունը սահմանափակող հիմնական պատճառը մինչև 1988 թ. երկրաշարժը գոր-

ծող մասնագիտացված գործարանի բացակայությունն է։ Գործում է նաև մեկ այլ տարրերակ, երբ անհատական գյուղացիական տնտեսությունը շարունակում է մշակել այնպիսի բույսեր, որոնցով զբաղվել է կուեկտիվ կամ պետական տնտեսությունում։ որպես օրինակ կարելի է նշել ծխախոտի մշակության ծավալների աճը՝ հանրապետության որոշ շրջաններում (Եղեգնաձոր):

1991 թ. հետո կատարված փոփոխությունների ողջ ընդգրկումը ցույց տալու համար կարելի է փաստել, որ դրանք միտված են հիմնականում ձևավորված շուկայական հարաբերություններին հարմարվելուն ու ստեղծված ճգնաժամային իրավիճակի հաղթահարման համապատասխան մեխանիզմների մշակմանը։

### ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՒ

#### ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՅԱՐԺԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՀՍՏ 1990-1996 թթ. ԷթնոՍՈՑԻՈՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՑՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ)

1. Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում բնակչության տեղաշարժերի թվաքանակի գնահատման վերաբերյալ գոյություն ունեն ոչ միանշանակ կարծիքներ։ Լինելով բարդ սոցիալական երկույթ, բնակչության տեղաշարժերը դժվարությամբ են հաշվառման ենթարկվում։ Պաշտոնական վիճակագրական տվյալներով, 1995-1996 թթ. այն կազմել է մոտ 590 հազ. մարդ, մինչդեռ մասնագետների գնահատմամբ՝ շուրջ 800 հազ. մարդ։

2. Սովորաբար բնակչության տեղաշարժերում առանձնացնում են էպիզոդիկ, ճոճանակային, սեղոնային, անվերադարձ ձևերը, որոնք միմյանցից տարբերվում են ոչ միայն բնույթով, դրդապատճառներով, ուղղվածությամբ, ընդգրկման շաւափիղներով, այլև էթնոժողովրդագրական, սոցիալ-տնտեսական հետևանքներով։ Վերը նշված վիճակագրական տվյալների որակական վերլուծությունից պարզվում է, որ Հայաստանում առավել զանգվածային բնույթ են ընդունել հանրապետությունից դուրս սեղոնային (85%) տեղաշարժերը և որոշ չափով էլ անվերադարձն ու էպիզոդիկը։

Սեղոնային տեղաշարժերի ժամանակ միգրանտը չփոխելով մշտական բնակության վայրը, տարբեր ժամկետներով մեկնում է ինչպես մերձավոր, այնպես էլ հեռավոր արտերկրներ և ընդգրկվում տարբեր տիպի

աշխատանքներում: Էպիզոդիկ ձեից առավել տարածված են տարբեր երկրներ կարճաժամկետ և ոչ կանոնավոր զրոսաշրջիկային տեղաշրջերը՝ հիմնականում առևտուր անելու նպատակով: Ինչպես սեղոնային, այնպես էլ էպիզոդիկ տեղաշրջերը մեր օրերում դարձել են հանրապետության բնակչության եկամուտների ձևափրման կարևորագույն աղբյուր: 1995 թ. ընթացքում Ռուսաստանից և այլ երկներից տարբեր ճանապարհներով Հայաստան դրամական փոխանցումները կազմել է մոտավորապես 28-50 մլն. ԱՄՆ դոլար:

Անվերագարծ տեղաշրջերը, որոնք ուղեկցվում են միգրանտի մըշտական բնակավայրի փոփոխությամբ, հանրապետությանն առավել բնութափրական էին 1990-1994 թթ., երբ այն ընդունել էր համեմատաբար լայն չափեր:

Բնակչության որոշակի տեղաշրջեր են կատարվել նաև հանրապետության ներսում՝ հատկապես քաղաքից-գյուղ, որն առաջին հերթին կապված էր հողի սեփականաշնորհման հետ:

3. Բնակչության տեղաշրջերը Հայաստանում պայմանավորված են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով՝ տնտեսական ճյնաժամով, բնակչության կենսամակարդակի անկմամբ, գործազրկության բարձր տեմպերի առկայությամբ և այլն:

1990-1996 թթ. Հայաստանի տարբեր պատմապատճենական շրջաններում (Այրարատ, Գեղարքունիք, Շիրակ, Սյունիք, Լոռի, Տավոշ) անցկացված էինոսոցիոլոգիական հետազոտություններից պարզվել է, որ այն պայմանավորված է տարբեր գրդապատճառներով: Այն հարցին, թե կցանկանայիք տեղափոխվել ձեր քաղաքից (գյուղից), երևան քաղաքում հարցման մասնակիցների 73%-ը տվել է բացասական պատասխան, 11%-ը ցանկություն է հայտնել տեղափոխվել գյուղ, 10%-ը՝ այլ երկրներ, 4%-ը՝ այլ հանրապետություններ (ԱՊՀ): Շիրակի մարզում (ք. Գյումրի) համեմատաբար բարձր տոկոս է կազմում այլ երկներ (16%), գյուղ (10%), այլ հանրապետություններ (8%) տեղափոխվել ցանկացողների թվաքանակը, որն առաջին հերթին պայմանավորված է աղետի գոտու առանձնահատկություններով: Որպես մեկնման կարևոր գրդապատճառ համարյա բոլոր սեռատարիքային խմբերում նշել են տեղում աշխատանքի բացակայությունը. երևանում 42%, Գյուղմրիում՝ 38%: Այնուհետև, որպես մեկնման մեկ այլ կարևոր գրդապատճառ ինչպես երեանում (22%), այնպես էլ Գյումրիում (26%) նշվել է ընտանիքի նյութական ծանր վիճակը: Կարևոր գրդապատճառ է համարվում նաև կենցաղային վատ պայմանները: Ընդ որում, այն ավելի բարձր տոկոս է կազմում Գյումրիում (22%), քան երևանում (17%): Մեկնման դրդա-

պատճառների վրա ազդեցություն են թողնում նրանց սեռը, տարիքը, մասնագիտական պատրաստվածությունը, կրթական մակարդակը:

4. Բնակչության տեղաշարժերն այսօր հանրապետության առջև ծառացած առաջնային խնդիրներից են և այն ինչպես գենոֆոնդի ապագայի, այնպես էլ էթնոսողովրդագրական և սոցիալ-տնտեսական առումնով պահանջում է խորն ու բազմակողմանի վերլուծություն և օրենսդրական դաշտի կատարելագործում:

### ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՑՅԱՆ ՀԱՅԻ

ՀՀ ԴՊՐՈՑԱՀԱՍՍԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ  
ԲՆՈՒԹՅԱԳՐԻՉՆԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ  
(ԼՍ 1994-1996 թթ. ԴԱՇՏԱՅԻՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ)

1. Կրթությունը, որը Հայաստանում ունեցել է զարգացած հզոր համակարգ և ամուր ավանդույթներ և համարվում է հայ ժողովրդի ամենակարևոր արժեքներից մեկը, շուկայական անտեսության անցման պայմաններում հայտնել է ծանր կացության մեջ: Ոչ բավարար պետական ֆինանսավորման հետևանքով, կրթության հետ կապված շատ ծախսեր ստիպված են հոգալու երեխաների ծնողները: Մինչդեռ բնակչության կենսամակարդակի անկման, գործազրկության բարձր տեմպերի առկայության պայմաններում սոցիալապես անապահով բազմաթիվ ընտանիքներ չեն կարողանում դիմակայել օրեցօր աճող այդ ծախսերին: Ահա ինչու, արդեն իսկ ուրվագծվում է այն կարեոր խնդիրը, որ որակյալ կըրթություն ստանալը մատչելի է ոչ բոլոր երեխաներին:

2. 1994-1996 թթ. Հայաստանի տարբեր մարդերում հավաքված նյութերի որակական վերլուծությունից պարզվում է, որ աղքատության երեւոյթը պայմանավորված է մի շարք ընդհանուր և առանձնահատուկ գործուներով՝ մարզի առանձնահատկություններով, բնակավայրի տիպով (քաղաք, գյուղ), սեփականաշնորհված հողի ջրովի և անջրդի չափերով, անասնագիշաբանակով, ունեցած տեխնիկայով:

Դպրոցական երեխաների աղքատության երեւոյթը պայմանավորված է նաև ընտանիքի բյուջեի ձևակորմամբ՝ մեկ շնչին ընկնող ծախսերի քանակով, ինչպես նաև ընտանիքի կառուցվածքով և չափերով: Տարբեր մարզերում և բնակավայրերում աղքատության չափանիշները տարբեր են:

3. Որպես դպրոցահասակ երեխաների աղքատության բնութագրիչներ առավել տարածված են.

ա) Դասագրքերի և դրենական պիտույքների ձեռքբերումը: Եթե խորհրդային իշխանության տարիներին երեխաներին դասագրքերն անվճար տրամադրում էր դպրոցը, ապա ներկայումս այն պետք է գննեն ծնողները: Ուսուցիչների վկայությամբ, ոչ բոլոր երեխաներն ունեն պահանջվող դասագրքերը, իսկ որոշ ծնողների խոստովանությամբ նրանք իրենց երեխաների համար չեն կարողացել ձեռք բերել պահանջվող դասագրքերը և գրենական պիտույքները:

բ) Հագուստի ձեռքբերում: Այն ներկայումս կապված է հսկայական գումարների հետ և մատչելի է ոչ բոլոր ընտանիքներին:

գ) Սնունդ: Ինչպես ծնողների, այնպես էլ ուսուցիչների վկայությամբ, նյութական ծանր վիճակում գտնվող ընտանիքների երեխաները երբեմն դպրոց են հաճախում կիսաքաղց ու քաղցած վիճակում:

դ) Դպրոցական կրթության հետ կապված ծախսերը դժվարությամբ հոգացող կարիքավոր ընտանիքները ԲՈՒՀ ընդունվելու համար չեն կարողանում ապահովել լրացուցիչ վճարովի դասընթացների ծախսերը, չխոսելով արդեն մասնավոր պարապելու մասին:

ե) Լրացուցիչ ուսուցում: Երաժշտական, սպորտային, գեղարվեստի և այլ դպրոցներում, որոնց վարձավճարները, հաճախ նաև տրանսպորտի հետ կապված ծախսերը մատչելի են ոչ բոլոր ընտանիքներին:

զ) Դպրոցի և դասասենյակի փոխիկական վիճակի և դպրոցական միջոցառումների հետ կապված ծախսեր:

Դպրոցահասակ երեխաների համար վերը նշված բնութագրիչները տարբեր մարզերում և բնակավայրերում ունեն տարբեր գերակայություններ:

4. Կրթական համակարգը պետք է դառնա պետական հոգացության առարկա և մշակվի այնպիսի քաղաքականություն, որ այն մատչելի ու բարձրորակ լինի սոցիալական տարբերի համար:

ԽՐԻՆԱ. ԴՈՒԺԵՆԿՈ  
ՀԱՅԻ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՈՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՈՐԻՆԵՐԻ  
ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐԾՈՒԹՅԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Էթնիկ ինքնության համալիրի հիմքը կազմող սեփական մշակութային ավանդությների պահպանման պրոբլեմը սուր կերպով կանգնած է այլէթնիկ շրջապատում բնակող ազգային փոքրամասնությունների առջև: Մշակույթների միմյանցից շատ կամ քիչ հեռու լինելը, սիմվոլիկ կամ իրական հակադրությունը փրկում է էթնիկ փոքրամասնություննե-

րին ավելի խոշոր կամ հզոր ընդհանրությունների մեջ ընդգրկվելուց կամ պարզապես ձուլվելուց:

Ինքնության խորհրդանշերի և արժեքների սեփական համակարգի առկայությունը թույլ տվեց Հայաստանի ասորիներին պահպանել իրենց էթնամշակությաին միասնությունը: Բնակության կոմպակտ եղանակը, մայրենի լեզվի պահպանվածության բարձր մակարդակը թույլ են տալիս այն օգտագործել ոչ միայն ընտանիքում, այլև հասարակական վայրերում: Ասորիների էթնիկ ինքնագիտակցության էական տարրերից է նաև ազգային հիշողությունը պատմական անցյալի, մասնավորապես ծագման ընդհանրության մասին, հպարտությունը համաշխարհային մշակույթում ասորիների ունեցած ներդրման համար և այլն:

Փողովրդական սովորույթները և ծեսերը էթնոսի բարոյա-էթիկական նորմերի կարևոր բաղադրամաս են, նրա զարդացման և ամրապնդման կարևոր գործոն: Գյուղական տոնների շնորհիվ պահպանվում են ասորիների մեջ ձևակորպված ներէթնիկ և միջամբային կապերը, ինչը մատնանշում է ներկա պայմաններում ավանդությային կենսաձևի պահպանվածության մասին:

Ասորիների յուրաքանչյուր խոշոր գյուղական ընակավայրում լայնորեն նշվում է այն սրբի հիշատակի տոննը, ում անունը կրում է գյուղի ուղղափառ եկեղեցին՝ Վերին Դիվնում դա սուրբ Մարեզու (հունիսի 14), Դիմիտրովոյում՝ սուրբ Մարտինու կուրյակուսի (հուլիսի 28), Արզնիում՝ սուրբ Մարիամի օրը (օգոստոսի 28): Այս տոնների, որոնք նշում են ոչ միայն Հայաստանի, այլև Ռուսաստան տեղափոխված ասորիները, ընորոշ գծերն են՝ մթերք կամ զրամ հավաքելու կոլեկտիվ բնույթը, ծիսական հյուրախիրության պատրաստման արխակի ձեր, համայնքային խնջույքները, ժողովրդական երգն ու պարը, որոնցով ուղեկցվում է ոչ միայն Հանդիսությունը, այլև դրան նախորդող մի ամբողջ ժամանակահատված:

Այդ տոնները երեխաներին և դեռահասներին հասարակության մեջ ընդգրկման կարմոր գործուներից են, դրանք նպաստում են զանազան սոցիալական և մշակութային ունակությունների պատվաստմանը, աճող սերնդի շրջանում մշակում են վարքի ստեղծութիվեր: Զնայած առանձին ձևափոխումներին, տոնների ընդհանուր կառուցվածքը պահպանում է ավանդությային գծեր:

Հայաստանի ասորիների տոնացույցում հին տոնների վերադարձը (ապրիլ 1-ը որպես նոր տարի նշելը) և նոր տոնների երևան գալը (օգոստոսի 7-ը՝ ասորի նահատակի օրի հիշատակ 1933 թ. իրաքում տեղի ունեցած ողբերգության), վկայում է ասորական էթնոսի կոնսոլիդացման մասին:

**ԴՊՐՈՑԱՀԱՍԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

**1.** Նշված թեմայով դիտարկումները կատարվել են 1995-1996 թթ. Հայաստանի տարբեր մարզերում՝ Սյունիք, Վայոց ձոր, Արքարատ, Շիրակ, Լոռի, Տավուշ։ Ուսումնամասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի հիշյալ մարզերի գյուղական բնակավայրերում երեխաները բացարձակապես գրկված են գեղագիտական դաստիարակության հնարավորությունից։ Պատճառը նաև կին կրթական համակարգի փլուզումն է և նորի բացակայությունը։ Դրա հետեւանքով, ծնողներից մեջի պատկերավոր խոսքերով արտահայտած, «մեր գյուղում երեխաները բացի ոչիսարածեցնելուց, ուրիշ ոչինչ չեն սովորում»։ Երեխայի ապագայով մտահոգված շատ ծնողներ մտածում են միջոցներ կուտակել և հեռանալ գյուղից, որպեսզի «երեխային մարդ դառնալու հնարավորություն տան»։

**2.** Գեղագիտական դաստիարակության հնարավորության բացակայությունը մտահոգում է ծնողներին մի քանի առումով։

ա) Ծնորհայի երեխաները հնարավորություն չունենալով զարգացնելու իրենց ունակությունները, չեն դրսեւորվում ըստ արժանվույն, ինչը խաթարում է նրանց ապագան։

բ) Երեխան՝ մեծանալով առանց համապատասխան գեղագիտական դաստիարակության, դրսեւորվում է թիրի և միակողմանի։ Դա հանդեցնում է երեխայի ներաշխարհի խելաթյուրմանն ու կոպտացմանը, մարդկանց հետ շփվելիս խորացնում սեփական անլիարժեքության և հոգեորադրամության զգացումը։

**3.** Հայոց ավանդական մշակություն հասարակությունն ունեցել է երեխաների գեղագիտական դաստիարակության կազմակերպման մեխանիզմներ։ Դրանք հիմնականում իրականացվել են խաղերի և տոնածիսական արարողությունների միջոցով։ Համայնքը լինելով ինքնակազմակերպվող հասարակական կառույց, ունեցել է իր գործունեությունն ու վերարտադրությունն իրականացնող արժեքները սերնդե-սերունդ փոխանցելու մեխանիզմներ։ Սոցիալիզմի գաղափարախոսական ճնշման տակ այդ մշակութային մեխանիզմները կոպտորեն ջարդվեցին և խեղաթյուրվեցին։

**4.** Այսօր հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող երկու խոշոր փոփոխությունները՝ պետական կառույցի ստեղծումը և համաշխարհային

տեղեկատվական ոլիմպի մեջ ներդրավումը խնդրի լուծման առումով պահանջում են յուրօրինակ մոտեցում: Գյուղը կամ համայնքն այսօր գեռունի երեխաների գեղագիտական դաստիարակության կազմակերպման անհրաժեշտ ներուժ՝ ժողովրդական արհեստ-արվեստների մեջ հմուտ, հիմնականում երրորդ սերնդի կանայք և տղամարդիկ, ինչպես նաև մշակույթի տներ կամ ակումբներ: Անհրաժեշտ է պետականորեն կազմակերպել այդ ներուժի և տեղեկատվական միջոցների օգտագործումը երեխաների գեղագիտական դաստիարակման գործը արմատապես բարեկավություն: Նման մոտեցումը կարող է ունենալ երկու դրական կողմ: Նախ, ազգային արժեքները կիրկկեն կորչելուց կամ, լավագույն դեպքում, միայն թանգարանային ցուցանմուշ դառնալուց և, երկրորդ, երեխաները կդաստիարակվեն դարերով մշակված ազգային գեղագիտական արժեքների ոգով:

### ՍՈՒՐԵՆ ՀՈԲՈՍՅԱՆ ՀԱԻ


ԳՈՅՑԱՑԵՎՈՒՄ-96  
(ԸՍՏ ՏԱՎՈՒԹԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ  
ԳՅՈՒՂԵՐԻ ԴԱԾՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ)

1. Վերջին տարիների դեպքերն ի հայտ բերեցին նախկինում մեղանձնոթ բաղմաթիկ իրողություններ, որոնց մասին պատկերացումը ունինք սոսկ տեսականորեն: Դրանցից են նաև սահման, սահմանամերձ գոտի, սահմանամերձ գյուղ և դրանց հետ կապված այլ հասկացություններ:

ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում առաջ են եկել արնատեսական և բարոյա-հոգեբանական նոր տիպի իրողություններ, կապված պատերազմական իրավիճակի և հողի սեփականաշնորհման հետ:

2. Հողի սեփականաշնորհումն իր հետ բերեց նաև բաղմաթիկ խընդիրներ, որոնց լուծումը միայն առանձին անհատներից չէ կախված: Դրանցից ամենակարևորներն են՝ տեխնիկայի կամ դրա վարձակալման անմատչելիությունը, ոռոգման, բուժման և բերքի իրացման հարցերը: Առկա դժվարությունների պատճառով հողերի մի մասը մնում է անմշակ, վերածվում խոպանի: Գնալով ավելի է խորանում սոցիալական խոր ճգնաժամը, որում հայտնվել է գյուղական բնակչությունը:

3. Սահմանամերձ գյուղերում էլ առկա են վերը նշված բոլոր խընդիրները, բայց ամենակարևորները բնակչության ֆիզիկական գոյության և անվտանգության հարցերն են: Հյուսիսարևելյան սահմանամերձ



գյուղերի մշակովի հողատարածությունների մեծ մասը գտնվում է Աղբյաջանին սահմանակից ցածրադիր տարածքներում: Դրանք հիմնականում այգիներ (խաղող, կորիզավոր պտուղներ) և վարելահողեր են: Փաստացի պատերազմական վիճակում գտնվելու պատճառով, տարիներ շարունակ գրանք հնարավոր չէ մշակել:

4. Ստեղծված իրավիճակում գյուղական որոշ համայնքներ փորձեր են անում հարեւան, սահմանակից աղբյաջանական գյուղերի հետ համաձայնության գալ առանձին հանդակների և տարածքների մշակումը կատարելու միաժամանակ, որպես փոխադարձ անվտանգության երաշխիք: Նման փաստերը, սակայն, եղակի են և շոշափելի արդյունք չեն տալիք:

5. Սահմանամերձ գյուղերը, այս պայմաններում, կանգնած են քայքայման եղրին: Հարկավոր է շուտափույթ կերպով պետականորեն լուծել հետևյալ հարցերը.

ա) վերոհիշյալ գյուղերի բնակիչներին աղատել բոլոր տեսակի հարկերից,

բ) վարկերի և այլ ֆինանսական միջոցների ներդրմամբ հնարավորություն ստեղծել կառուցելու և նորոգելու պատերազմական գործողությունների ժամանակ ավերված կամ վնասված տները,

գ) բարեկարգել այդ գյուղերի ճանապարհներն ու հաղորդակցության մյուս միջոցները:

6. Միայն այս քայլերի շնորհիվ կարելի է կանխել սահմանամերձ գյուղերի բնակչության արտահոսքը՝ և վերականգնել բնականոն կյանքը:

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԽ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԾՐՁԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐՀԹՆԻԿ ԽՄԲԵՐԸ.  
ՓՈԽՀԱՐՄԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Զեկուցման համար հիմք ծառայող դաշտային նյութերը հավաքվել են 1994 թ. «Համաշխարհային բանկ»ի կողմից ֆինանսավորվող «Աղքատությունը Հայաստանում» թեմայի շրջանակներում տարվող հետազոտական աշխատանքների ընթացքում:

2. 1990-ական թթ. առաջին կեսին Վարդենիսի շրջանի հայ բնակչության ներսում առանձնանում է երեք խոշոր ներէթնիկ խումբ:

Առաջին խումբը կազմում են 1829-1830 թթ. Արևմտյան Հայաստանի Ալաշկերտից Դիաբին ընկած շրջաններից ներգաղթածների սերունդները, որոնք բնակվում են հիմնականում շրջկենտրոնում, մասամբ և

Զող (Սոթք) բանավանում, ինչպես և Ծովակ, Կարճաղբյուր և մի քանի այլ գյուղերում: Երկրորդ խումբը կազմում են 1915-1918 թթ. Վանի, Բիթլիսի, Մուշի, Կարնո, Ալաշկերտի տարածաշրջաններից տեղահան արված հայության երկրորդ-չորրորդ սերունդների ներկայացուցիչները, որոնք բնակվում են հիմնականում նորակերտ, Կարճաղբյուր, Մեծ Մասրիկ և Խաչաղբյուր գյուղերում: Երրորդ խումբը 1988-1992 թթ. Աղբբեջանի Շամխորի, Խաչմասի, Դաշեստանի, Կասում-Խամայլովի, Մինդեչառի, Շահումյանի շրջաններից, ինչպես և Բաքու, Առումդայթի, Կիրովաբադ քաղաքներից բոնագաղթվածներն են, որոնք տեղաբաշխված են շրջանի շուրջ 28 նախկինում աղբբեջանաբնակ գյուղերում:

3. Թվարկված խմբերից առաջինի ներկայացուցիչներն իրենք իրենց անվանում են Եղվական (թուրք.՝ տեղացի), իսկ դարասկղբին ըլունագաղթվածներին կոչում են՝ որոշակիորեն արհամարական երանգ հազորեկով՝ Գաղթական, ինչպես և Վլոշիկ (մեկնաբանվում է որպես ծագած Ռշտունիք գավառանունից): «Գաղթական»ները «տեղացի»ներին անվանում են կոր (ակնարկվում է բարբառի կոպտավուն հնչողությունը): Վերջին տարիների փախստականներին «տեղացի»ները, կրկին արհամարական երանգ ներդնելով՝ կոչում են գլամա (թուրք.՝ նոր եկած):

4. «Տեղացի»ները, կազմելով բնակչության փոքրամասնությունը, գերակշռում են իշխանության ստորինից վերին մարմիններում, մինչդեռ փախստականները, ունենալով բնակության նախկին վայրերում ղեկավար դիրքեր ունեցած մարդկանց, անգամ գյուղերի մակարդակով գրավում են երկրորդական պաշտոններ: «Գաղթական»ները և «գյալմա»ները համամիտ են, որ «տեղացի»ները բոլոր պարագաներում աջակցում են միմյանց, շատ ղեպքերում անգամ հաշվի չառնելով «իրենց» կազմերի ցածր մասնագիտական որակավորումը:

5. «Տեղացի»ները գերիշխող դիրքեր են գրավում նաև շրջանի տընտեսության առաջատար, սակայն «ստվերային» բնույթ կրող մի ճյուղում՝ ձկնորսության-ձկնագողության ասպարեզում, որն այսօր գոյության միջոցներ հայթհայթելու եղակի հնարավոր եղանակներից է Վարդենիսում:

Նախկինում հացառատ այս տարածաշրջանում սևփականաշնորհված վարելահողերը գրեթե բարձիթողի վիճակումն են, իսկստ ցածր է բերքատվությունը: Սրա հետևանքներից մեկն իրենց վիճակները էապես բարելավելու համար բավարար միջոցներ չունեցող փախստականների կողմից հողատարածքները վարձակալությամբ «տեղացի»ներին հանձնելու երևույթի լայնորեն տարածված լինելն է: Ընդ որում, շատ հաճախ հնարավորություն ունենալով վարձակալությամբ հողեր ձեռք բերելու

իրենց գյուղերում, «տեղացի»ները, այնուամենայնիվ, գերադասում են դիմել փախստականներին: Ակնհայտ է, որ հողի ազատ առք ու վաճառքի պաշտոնականացումից հետո փախստականների զգալի մասն (առաջին հերթին նախկին քաղաքաբնակները) իրենց հողամասերը վաճառելու են «տեղացի»ներին:

6. Վերն առանձնացված ներէթնիկ խմբերի միջև փոխհարաբերությունների նման վիճակն արտացոլող նաև այլ փաստերը վկայում են, որ Վարդենիսի շրջանի հայ բնակչության ներսում առանձնանում են որոշակի ենթակիթնիկ ինքնագիտակցությամբ օժտված խմբեր, նրանց միջև տարբերությունները դրսնորդում են նաև սոցիալական ու կենցաղային ոլորտում: Այս ամենը «յուրային-օտար» հակառակության դրսեորման տիպիկ օրինակ է և հանդիպում է Հայաստանի նաև այլ շրջաններում:

### ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԻ

#### ՂԱՐԱԲԱԴ-ՂԱՅԱՍՏԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆՏ ՂԱՐԱԲԱԴՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՑՈՒՑԱԿԱՄԱԿՐՈՒԹՅՈՒՆ

Ազգային ինքնության խոսուն դրսեորումներից մեկը պատկերներն ու գրավոր բանաձևերն են, որոնք, որպես կանոն, մեծ թվով ի հայտ են գալիս հասարակության համար ճգնաժամային պահերին: Այս առումով՝ Ղարաբաղյան շարժումը (1988-90 թթ.) և, մասնավորապես, Շարժման բոլոր փուլերն ուղեկցող և իրադրության ցանկացած փոփոխությանն անմիջապես արձագանքող պատկերագիր «վկաները», ցուցապատճենը ուսումնասիրության հարուստ և մեծ գաշտ են ներկայացնում: Դրանց շարքում զգալի թիվ են կազմում այն բանաձևերն ու պատկերները, որոնցում ամենատարբեր ձևերով արձանագրվում էր Ղարաբաղի Հայաստանին վերամիավորվելու գաղափարը:

1. Ցուցապատճենների մի մեծ խումբ կարելի է միավորել «Ղարաբաղը Հայաստանի մաս» վերնագրի տակ: Այդ թեման արտացոլում է ժողովրդի պատկերացումն իր պատմության, պատմական արդարության, ազգերի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ և փաստորեն սնում էր Շարժումը նրա գոյության ողջ ընթացքում: 1988 թ. նոյեմբերյան «Воссоединение Арцаха и Армении - исторический справедливое требование армянского народа» ցուցապատճենը, թերևս, առավել տարօղունակ է փոխանցում տվյալ խմբի հիմնական գաղափարը: Որպես այդ թեղի պլակատային մակարդակով ապացույց 1988 թ. գարնանը բերվում էին խորհրդային և աղբբեջանցի ճանաչված կուսակ-

ցական և պետական գործիչների խոսքերը. «Карабахский вопрос есть вопрос чести советских республик. Орджоникидзе», «Карабах, Нахичевань и Зангезур были и остаются неотделимой частью Армении. Н. Нариманов. 2 декабря 1920, газ. "Бакинский рабочий"»:

2. Դիտարկվող խմբի ցուցապատճեների ևս մի հատված կարելի է առանձնացնել յուրահատուկ բանալի հանդիսացող «միացում» բառի առկայությամբ. «Միացումը մեր գլխավոր խնդիրն է», «Հայաստան-Արցախ-միացում», «Արցախ-միացում» և այլն: Հետաքրքիր է հետեւ, թե ինչպես էր փոխվում այն ենթատեքստը, որի միջով Շարժման տարիներին անցնում էր «միացման» գաղափարը: Եթե սկզբում այն ընթանում էր որպես միջոց պատմական արդարությունը վերականգնելու համար, ապա առժամանակ անց այն դարձավ ժողովրդի ինքնորոշման իրավունքը կենսագործող մեխանիզմ: Սումգայիթյան ողբերգությունից հետո «միացում» գաղափարը դարձավ երաշխիք նոր եղեռններից, միակ պայման մարդու իրավունքները պաշտպանելու համար, քանզի այդպիսիք (մարդու իրավունքները) հաշվում էին սկզբունքորեն անիրազործելի Լ. Ղ. Մ.-ի Ազգբեջանի կազմում մնալու դեպքում:

«Միացում» բառն արդեն 1988-ին ծնունդ տվեց Հայերի միավորմանը կոչող և մեծ ժողովրդականություն վայելող «Հայեր, միացեք» բանաձեին: Իր ներ, սկզբնական (Արցախի միացումը Հայաստանին) և լայն (բոլոր Հայերի միացում) իմաստով օգտագործվող «միացում» բառն թերևս իր տրամադրանական ավարտը գտավ 1988 թ. նոյեմբերյան «Հայ ժողովրդի միասնությունը Արցախի հարցի լուծման գրավականն է» պլակատում:

3. «Միացում»-ի գաղափարը՝ արդեն վերամիավորման երանգով՝ իր դրսերումը գտավ բազմաթիվ այն ցուցապատճեներում, ուր խաղարկվում էր միմյանցից բռնի անջատված և միմյանց կրկին գտնել երազող մոր և զավակի մոտիվը: Այս թեման ընդգծված շեշտադրում ուներ Հատկապես 1988 թ. փետրվարյան միտինգների առաջին օրերին: Տրանսպարանատային կատարմամբ այն հնչում էր հետեւյալ ձևով. «Մы ждем свое дитя Арцах», «Մայр-Հայաստանը քեզ է կանչում, Ղարաբաղ» կամ «Մայր-Հայաստանն է կանչում»: Բերված բոլոր բանաձերն ուղղված են մոր կողմից զավակին, ինչը զարմանալի չէ, քանի որ դրանք ստեղծվում էին երեանում: Մոտավորապես այդ նույն ժամանակ՝ 1988 թ. մայիսին, Ստեփանակերտում ևս հանդիպում էին նմանատիպ պլակատներ, սակայն դրանք արդեն ուղղված էին անապաստան զավակի կողմից մորը, ինչպես օրինակ «Որբ Ղարաբաղը մայր է ուզում», «Мечта карабахцев - воссоединение с матерью-Арменией»: «Ղա-

ռաբաղը՝ մայր-Հայաստանին» պահանջը՝ առանց մայրության թեմային հղելու, աստիճանաբար ձեռք է բերում «Արցախը-Հայաստանին» տեսք:

4. Դիտարկվող թեմայում հետաքրքիր խումբ են կազմում այն պահատները, որոնցում պնդվում է, թե «Ղարաբաղը մերն չ», «Արցախ աշխարհը մերն չ»: Այս լոգունքն այն աստիճան ժողովրդականություն վայելող էր, որ անմիջապես դարձավ առօրյա բանաձև, հիմք հանդիսանալով մասսայական ժողովրդական ստեղծագործության բառախաղային բնույթի դրսերումների: Ղարաբաղի «մերը լինելու» ապացուցման միջոցները տարբեր երանգավորում ունեին. համբերության կոչերից («Հայեր, դիմացե՞ք...») մինչև կտրական «Մի հող, որ թեկուզ երկինք համբառնա, / Հայոց եղել է, Հայոց կմնա», «Ղարաբաղը մերն է եղել, կա և կլինի» կամ էլ «Ղարաբաղը միայն Հայաստանին»:

5. Ցուցապատճենները թույլ են տալիս նաև հստեսել, թե օրենսդրական բնույթի ինչպիսի սկզբունքներ է առաջարկում ժողովուրդը զարարացյան պրոբլեմի լուծման նպատակով: Օրինակ, 1988 թ. նոյեմբերին, երբ լայնորեն քննարկվում էին ԽՍՀՄ Սահմանադրության լրացումներն ու փոփոխությունները, հանդես եկավ «Ղարաբաղ-Հայաստան. մեկ ժողովուրդ՝ մեկ Հանրապետություն» տրանսպարանտը, որտեղ «օրինաստեղծության» լեզվով փաստորեն պնդվում է «Ղարաբաղը Հայաստանի մաս» մեր կողմից դիտարկվող պլակատների մեջ խմբի հիմնական միտքը:

6. Այսպիսով, Ղարաբաղյան շարժման ընթացքում Ղարաբաղ-Հայաստան փոխհարաբերություններն արտացոլող հիմնական՝ «Ղարաբաղը Հայաստանի մաս» բանաձևը ձևափոխվում է պատմական, բարոյական, իրավաբանական հիմնավորումներ ունեցող խնդրանք-պահանջեց մինչև հաստատական պնդում, որ «Ղարաբաղը մերն է եղել, կա և կլինի» կամ «Ղարաբաղը մերն առ ԲՅՇ»:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԽԻԹԱՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ  
ՀԱԻ, ԵՊՀ

#### ԳՈՅԱՏԵՎՈՒՄ-94

(ԸՍՏ ՎԱՅՔԻ ԵՎ ԳՈՐԻՍԻ ԾՐՁԱՆՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ)

Շուկայական տնտեսության տարրերի ներթափանցումը հայաստանյան գյուղ քաղաքական նոր ձևափորվող համակարգի պայմաններում առաջ բերեց, ի թիվս այլ երևոյթների, նաև կենսաձևի էական փոփո-

խություններ: Այս գործընթացը տարբեր տարածաշրջաններում տարբեր դրսերումներ ունի:

Ներկա հաղորդման նյութերը հավաքվել են 1994 թ. «Համաշխարհային բանկ»ի կողմից տարբեր «Աղքատությունը Հայաստանում» ուսումնասիրության ընթացքում:

1. Գյուղի կյանքից պետության չափազանց արագ հեռացմանը գուղընթաց զյուղացիական անհատ սեփականատիրական տնտեսությունը ստացավ փակ բնատնտեսություն վարող միավորի տեսք: Տեղում չարտադրվող կամ չնչին քանակությամբ արտադրվող, սակայն գոյության համար անհրաժեշտ ապրանքները սկսեցին ձեռք բերվել պարզագույն ապրանքափոխանակության եղանակով, ինչն առ այսօր գործող միակ իրական մեխանիզմն է, փաստորեն զյուղական հասարակության ներքին կյանքի ինքնակարգավորման դրսերում: Գյուղ մուտք գործող գումարները հիմնականում սոցիալական բնույթի պետական վճարումներն են, որոնք գերազանցապես պահպան են հարկերի, արանսպորտի, մեխանիզատորներին դաշտային աշխատանքների համար վճարելու, դպրոցականների համար անհրաժեշտ գրենական պիտույքներ ձեռք բերելու նպատակներով: Միջքաղաքային տրանսպորտի թանկությունը ևս ինքնապարփակմանը նպաստող հանգամանքներից է: Փոխվել է ազգակցական-քարենակամական հարաբերությունների բնույթը. դրանք գերազանցապես դրսերում են զյուղից քաղաք (շրջկենտրոն, Երևան) մթերային պարբերական ներարկումների ձևով: Ընդ որում, օգնությունն առաքվում է գրեթե բացառապես աղդակցության առաջին աստիճանին գտնվող հարազատներին: Կան քաղաքից զյուղ վերադառնալու դեպքեր, պայմանավորված զյուղում հող մշակելով գոյության միջոցներ ձեռք բերելու ակնկալիքով: Ժամանակավոր արտագնա աշխատանքի մեկնողների թիվը տեղացիների շրջանում բավականին փոքր է (էլ ավելի քիչ է ընտանիքով տեղափոխվածների քանակը). Նման դեպքեր համեմատաբար շատ են արձանագրված Աղբենջանից բռնագաղթվածների միջավայրում:

2. Այլ է վիճակը քաղաքներում, որտեղ աշխատավարձը գոյատևելու հիմնական միջոցն է բնակչության զգալի, սոցիալապես անապահով մասի համար: Քաղաքաբնակների մի մասն սկսել է խոշոր եղջերավոր անատուններ պահել (միայն Վայք շրջկենտրոնում՝ շուրջ 500 գլուխ): Փոխվել է տնամերձ հողամասերից ստացվող արդյունքների տեսականին, բարձրացել է դրանց գերը: Մանր ապրանքային առևտուրը, որն ավելի զարգացած է Գորիսում, ևս գիտվում է որպես հական գործոն գոյատեման ուղղմավարությունում:

3. Բնակչությունը մեծ դեր է տալիս և շատ բարձր է գնահատում մթերային օգնություններ ստանալու փաստը: Միաժամանակ, օգնություն առաքող կազմակերպությունների տեղական առանձնահատկություններին ծանոթ չինելը որոշ դեպքերում հանդիցնում է կաղումների. այսպես, բնավ նպատակին չծառայեց աշակերտներին և ուսուցիչներին 110-օրյա մթերային օգնության ծրագիրը, գյուղեր առաքվող մանկական կաթի փոշին բավականին հաճախ օգտագործվում էր լոկ թրիվածքներ պատրաստելու համար: Օգնության բաշխումը որոշ դեպքերում կարող է անգամ խոչընդոտել ներկթնիկ կոնսոլիդացիոն գործընթացներին: Այսպես, միայն փախստականներին նավթ և նավթավառ բաժանելը բնակչության որոշ մասի կողմից ընկալվեց իրեւ խտրականության դրակորում «յուրային» ների նկատմամբ՝ հօգուտ «օտար» ների:

4. Էտապես փոխվել է մոտեցումն առողջության նկատմամբ: Մարդիկ հիվանդանոց են գնում միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, ինչը պատճառաբանվում է ըստանձնակազմին պարտադիր խոշոր գումարներ վճարելու, գեղեց գնելու, արանսպորտի թանկ լինելու հանգամանքներով: Աղքատացել է (հատկապես քաղաքաբնակների շրջանում) սննդի տիսականին: Դպրոցական կրթության մակարդակի անկման, ինչպես և ֆինանսական գժվարությունների հետևանքով խիստ քչացել է երևանյան բուհեր ընդունվողների քանակը:

Կենսաձևում տեղ գտած հիշյալ փոփոխությունները հետևանք են գործոնների, որոնք այսօր վերանալու միտումներ դեռևս չեն դրսմորում:

## ՍՈՒՍԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ ՀԱՊԹ

### ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ՏՈՆԱՑՈՒՅՑԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Անցման փուլի կարևորագույն բնորոշիչներից է իրողությունների ծայրահեղացված ընկալումը և որպես վերջինիս անմիջական հետևանք՝ եղածն ամեն կերպ սրբագրելու միտումը: Մեր ժամանակն այս տեսակետից բացառություն չէ: Սակայն, եթե վերարժեքավորման օբյեկտիվորեն անհրաժեշտ գործընթացն ուղեկցվում է մասնագիտական ու հասարակական հաստատությունների ուղղակի մասնակցությամբ, ապա վերոհիշյալ միտումը սահմանափակվում է գիտականության շրջանակներում և ապահովում է հասարակության առաջնականության շրջանակներում:

2. Հաշվի առնելով տոնա-ծիսական համակարգի դերը հոգևոր-մշակութային ոլորտի կայունացման խնդրում, անդրադառնանք այսօր գործող պաշտոնական տոնացույցին, որն, ըստ իս, կարիք ունի ճշգրտման, հստակեցման ու ամբողջացման:

Բանն այն է, որ Ներկայումս հարաբերականորեն գործող տոնացույցը՝ հապճեպորեն հաստատված 1990-ական թվ. սկզբներին, այլևս չի արտացոլում այսօրվա իրականությունը: Ավելին, այն ոչ միայն չի ընդգրկում մեր ժողովրդի մեջ արմատացած այնպիսի տոներ, ինչպիսիք են Մարտի 8-ը, Մեծ Զատիկը, Մայիսի 1-ը, Մայիսի 9-ը, այլև իր հակասականությամբ ու արհեստականությամբ (երկու նոր Տարի, երկու Անկախության տոն) արժեզրկում է իր իսկ ամրագրած տոները (Մայիսի 28, Ապրիլի 7, Ար. Ծնունդ), ընդհանրապես տոնաստեղծման երևոյթը՝ հանգեցնելով այն ծիսականությունից զուրկ նշանակովի միջոցառումների մակարդակի՝ գրչի հարվածով մերժելով կամ տեղաշարժելով այս կամ այն տոններ:

3. Այսօրվա հասարակական կարծիքը և վարվող պաշտոնական քաղաքականությունը հիմնվում է այն թյուր տեսակետի վրա, թե ավանդական տոները և կեղեցական են, հետեւաբար մի դեպքում՝ մերժվում են, մյուս գեպքում՝ անվերապահորեն ընդունվում: Այս գեպքում հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ դրանք լսորարշն ժողովրդական տոներ են և եկեղեցին ինքն է որդեգրել ու դարեր շարունակ մշակելով պահպանել՝ հարմարեցնելով իր գաղափարաբանությանը:

Ներկա զեկուցման մեջ փորձ է արգում նորովի արժեվորելու ժամանակակից տոնա-ծիսական համակարգի առանձին տոները, բացահայտելու ավանդութային և խորհրդային տոների նկատմամբ առկա միանշանակ մոտեցման սնանկությունը, զեր հանելու տոնաստեղծման գործընթացի առանձնահատկությունները և մատնանշելու ավանդական արժեքների վերականգնման ու պահպանման որոշ մեխանիզմներ:

ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ  
ՀԱԽ

## ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԾ

Արդիական էթնոսոցիոլոգիական և պատմական տեսանկյուններով ուսումնասիրությունների միջոցով բացահայտվեցին տոների կենցաղագրման և դրանց մասնակիցների հավատքի միջև գոյություն ունեցող օրյեկտիվ կապը:

1. Կրոնական գործոնով են պայմանավորված ինչպես ավանդութային, այնպես էլ աշխարհիկ բնույթի տոների կենցաղավարման մասշտաբները:

2. Գոյություն ունեն ավանդութային առանձին տոներ, որոնք նկատելիորեն տարածված են նաև կրոնը մասամբ ժխտող անձանց շրջանում:

3. Ավանդութային տոների կենցաղավարման եկեղեցական և ոչ եկեղեցական ոլորտները բավական տարբեր են, որը վկայում է այդ տոների քրիստոնեական և ոչ քրիստոնեական բնութագրերի առկայության մասին:

4. Բովանդակության կենցաղային ընկալման առումով առանձնանում են ինչպես ավանդութային-կրոնական, այնպես էլ խորհրդային-աշխարհիկ տոները:

5. Քրիստոնեական տոնացույցի միջուկը կազմող տոները հայոց կենցաղում մեծ մասամբ ընկալվել են որպես ազգային տոներ:

6. Եկեղեցիներ այցելու կապակցությամբ շարժառիթների ուսումնասիրությունը ցույց տվեցին կրոնական և ոչ կրոնական գործոնների հարաբերակցությունը: Վերջին շրջանում այդ գործոնների միջև տեղի ունեցած փոփոխությունը գլխավորապես պայմանավորված է ազգային զարթոնքի անցումային այդ շրջանում եկեղեցու և կրոնի նկատմամբ արժեքային նոր ընկալումներով, որն ունի ոչ այնքան կրոնական, որքան էթնոգերբանական և քաղաքական երանգավորում:

7. Հայոց կրոնական նկարագրում առաջնային տեղ է գրավում նրա տոնածիսական բաղադրատարրը և այս հանդամանքն իրավունք է վերապահում հայոց հավատքը բնորոշելու որպես ծիսահավատություն:

8. Գոյություն ունեն որոշակի ընդհանրություններ ավանդական և նորաստեղծ կրոնական համայնքների ձևակրման շարժառիթներում և մասնավորապես նրանց տոնածիսական վարքագծերում:

Այսօր էլ այդ համայնքներում մասամբ են ընդունված (իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ ամբողջությամբ մերժված են) ավանդութային տոները, ուր հիմնականում առաջնությունը տրվում է դրանց քրիստոնեական-ավետարանչական իմաստին:

9. Հայ առաքելական եկեղեցին իր հավատացյալ կողմնակիցների հետ միասին միավորում է նաև հավատքի նկատմամբ թեթևակի կամ ընդհանրապես առնչություն չունեցող էթնոսի բավական մեծ զանգված, որի համար այն ավանդաբար մնում է որպես ապազդային կրոնական գաղափարախոսություն ունեցող հավատացյալ-աղանդապորներից տարանջատող և ընդհանրապես էթնիկ պատկանելությունը հաստատող կամ լրացնող կարևորագույն գործոն:

**ՕՊԵՐԱՏՈՐԸ ԻԲՐԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԻ  
ՆՈՐ ԳՈՐԾՈՂ ԱՆՁ**

Արխաիկ զանգվածային ծիսական գործողության հիմնական տարբերությունը ծիսական վարքի այլ ձևերից «Սկզբի» վերաստեղծումն է, երբ հերքվում է պրոֆան կյանքը և կողեկտիվը վերարտադրում է մի իրավիճակ, որտեղ յուրաքանչյուր տարբերություն, զանազանությունն հարթվում է, լինի դա ժամանակային, տարածական թե հասարակական։ Սակայն նշված հատկանիշներն ավելի շատ բնորոշ են տոնին, այն դեպքում, երբ արխաիկ ծեսի մյուս տիպը՝ նախածեսը, կառուցվածքային առումով ավելի համադրելի է թատերակայնացված գործողության հետ (Լ. Արբահամյան), որտեղ կան հերոսներ (Հմմտ. գլխավոր դերակատարների հետ), հանդիսատես, նախնական սցենար։ Կա մեկ այլ տարբերություն ևս. եթե տոնը մասնակիցներին տեղափոխում է «նախաժամանակ», ապա ծեսը սկսում է ժամանակի հաշիվը՝ մտցնելով նախադեմի հասկացությունը՝ արարման առաջին օրը, առաջին ամուսնությունը, առաջին հերուը և այլն։ Ուստի և արդիական է դառնում արձանագրման (ֆիքսացիայի) պահը և հենց ինքը՝ փաստն, այնպես, ինչպես հարսանիքում ամուսնության դրանցումը։

2. Հայերի պսակադրության (որը գրանցման տարբերակ է) հնագույն ձևերից է «թոնրի պսակը», երբ, ըստ ժողովրդական պատկերացումների, նախնիներից համաձայնություն էին խնդրում ամուսնության համար։ Այստեղ արձանագրումը կատարվում էր գործողության մակարդակով (համբուրում էին թոնրի շուրջը) և միտված էր անցյալին (նախնիներ)։

Միջնադարում հարսանյաց ծիսաշարքը լրացվեց եկեղեցական ծեսերի մի ամբողջ համալիրով, որը գրանցում էր ամուսնությունը «ասսծո առաջ» (հարսն ու փեսան դեմքով ուղղվում էին դեպի խորանը, ամուսնության փաստը գրանցվում էր ծիսամատյանում), արձանագրման պահն իրականացնելով լոկ խոսքային մակարդակով (երդում խորանի մոտ)։

Քաղաքացիական ամուսնությունը մտցնում է «գրավոր խոսքի» արձանագրում՝ ստորագրմամբ գրանցման մատյանում։ Միենույն ժամանակ ամուսնության վավերացմանը ավելանում է լուսանկարը՝ ամուսնության արձանագրում ժառանգործների համար։

3. Հետաքրքիր է, որ ամուսնության արձանագրման ամեն մի նոր ձև ոչ թե փոխարինում է, այլ գումարվում է նախորդին: Վերջին ժամանակներս ի հայտ է եկել արձանագրման մի նոր ձև, որն, առաջին հայացքից, զրկված է որևէ սրբազնացված իմաստից (ինչը կարող է ազդեցիկ լինել ծեսի համար), սակայն շնորհիվ մի շարք գործոնների, կարող է ունենալ ծիսական նշանակություն: Խոսքը տեսախցիկով արձանագրելու մասին է, ինչը գործառությի առումով հավասարագոր լինելով լուսանկարմանը (իբրև հարսանիքի արձանագրում ընտանեկան արխիվի համար, տեսափաստաթուղթ ժառանգների, ապագայի համար), ոչ միայն արձանագրում է գործողությունը, այլ տեխնիկական առանձնահատկությունների շնորհիվ կանխորշում է ծեսի ընթացքը, իսկ չեղոք արձանագրողը՝ օպերատորը, դառնում է հարսանիքի գործող անձ (պերսոնաժ), հաճախ՝ նրա կամաթեակամառ ուժիսորը:

Օպերատորը մի քանի առումով է հանդես գալիս իբրև հարսանիքի գործող անձ.

ա) իբրև նկարահանված նյութի ուժիսոր, հարսանիքի տեսանյութերի հեղինակ՝ որտեղ արդեն նշմարվում են որոշակի օրինաչափություններ, օրինակ՝ ստանդարտ կաղըերի ընտրության և հերթականության հարցում կամ, այսպես կոչված, «կամերային էֆեկտներում»:

բ) տեխնիկական անհրաժեշտությունից ելնելով՝ ծիսական գործողությունների ակամա ուժիսորի դեր կատարելով:

գ) հարսանիքի «կամավոր» ուժիսոր, քանի որ բազմաթիվ հարսանիքներին մասնակցելու մեծ փորձ ունենալով, օպերատորը դառնում է դրա փորձագետ և կարող է հանդես գալ իբրև խոհրդատու՝ եթե հարսներուները լավ չեն իմանում ընդունված ծիսակարգը:

դ) մշտական հանդիսատեսի դիրքից (տեսախցիկ-դիտորդ), ինչն ազդում է հարսանիքի մասնակիցների վարքի վրա, որոնք տեսախցիկի առաջ որոշակի կեցվածք ընդունելով, դրանով իսկ կարծես թե մտնում են այս կամ այն դերի մեջ, վերականգնելով «դերակատարների» ավանդական կերպարը:

4. Այսպիսով, հարսանիքի նոր գործող անձը՝ օպերատորը, փաստուն ազդում է հենց ծեսի տիպի վրա: Արդյունքում վերջին տարիներին հարսանյաց ծեսում ամրապնդվող տոնական կառուցվածքը քանդվում է տեսախցիկի ազդեցության տակ: Դա ճնշում է հարսանիքի մասնակիցների տոնական անմիջականությունը՝ ծեսի կառուցվածք ընմական (թատերական) սկզբունքը մտցնելով:

ԱՌԱՍՎԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՐՔԵՏԻՊԵՐ  
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Պետության կառուցումը և կայացումը, կիսագաղութային ազգից անկախ ազգ դառնալու գործնթացները տիեզերածնության և դրա աղդաբանական ասպեկտի՝ ազգաճնության ամենաբարձր դրսերումներն են և վերջուծությունը ցույց է տալիս այս երկույթների առասպելականացած ընկալումը անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ժողովուրդների պատկերացումներում, ուր գործում են ամենաարիշիկ առասպելաբանական արքետիպերը:

1. Աշխարհը կարելի է ընկալել որպես ինչ-որ մի կանոնավոր, կամ, ընդհակառակը՝ քառային, անկարգ էություն: Երկրորդ ընկալումը ընորոց է առասպելաբանական խաբերայի՝ թրիքստերի կերպարին: Թրիքստերն արարիչ աստվածության պարողին, կոմիկ դրսերումն է: Ինուական և համախորհրդային բանահյուսության մեջ հայի կերպարը, առավել քան որևէ այլ կերպար, բացահայտորեն համապատասխանում է թրիքստերին: Հմմտությունը հատկանիշները հատկապես անեկուտներում՝ գերսեքսուալ, հոմոսեքսուալ, խարդախ առևտրական (թրիքստերի հատկանիշներն են), տիեզերածին հարցերին կոմիկական, տիպիկ թրիքստերային պատասխաններ տվող (հայկական ուագիոյի շարքում): Միանգամայն հակադիր է սիյուռքահայի կերպարը (պետության ամենահավատարիմ քաղաքացի), որը ցույց է տալիս, որ հայերի (ինչպես և այլ ազգերի) մեծամասնության կողմից ԽՍՀՄ-ն ընկալվում էր որպես ոչ կարգավորված մի աշխարհ:

Ներկայումս միակ երկիրը, ուր հայերի համար չկա աղգային ճընշում և խիստ օրինական դաշտ, Հայաստանն է, որտեղ և հնարավոր է ԽՍՀՄ թրիքստերային կենսակերպի շարունակությունը:

2. Պետության զեկավարները՝ նախագահները, ինչպես նախկինում թագավորները, համագրվում են տիեզերածին աստվածության հետ, որը նոր պետության ինստիտուտները ձևավորելիս հանդես է դալիս որպես տիպիկ արարիչ: Պետության ղեկավարի և նրա շրջապատի ձախողումները և որպես անօրինական գնահատվող քայլերը մոտեցնում են նրան ձախողված պարողիկ արարչին՝ թրիքստերին, և զեկավարության այդպիսի ընկալումը հանգեցնում է հասարակության և պետության որպես չկարգավորված տիեզերքի ընկալմանը: Պետության ղեկավարի մյուս ընկա-

լումը նրա համարդությունն է արարիչ աստծու հակառակորդի՝ քառսի, թշնամական ուժերի մարմնավորման հետ (ընդդիմադիր շրջանակներում):

3. Արդեն իսկ ԽՍՀՄ-ում, որը բաղմաթիվ հատկանիշներով նմանվում էր արխափի հասարակություններին, դյումեղիլյան դպրոցի ներկայացուցիչները ցույց են տվել հին հնդեվրոպացիների «եռամաս գաղափարախոսության» հետ համադիելի երկույթներ, որոնք շարունակվում են մինչև այժմ: Արքան, ըստ այդ պատկերացումների, իդեալական, կատարյալ մարդ է, որը խորհրդանշում է հասարակության դասերի դաշինքը և իրենում ամփոփում երեք դյումեղիլյան գործառույթները (հմայական, ուղամական, տնտեսական-համայնական): Որևէ կուսակցության կամ գաղափարախոսության նվիրյալ նախագահները կարող են ընկալվել որպես հասարակության դասերի դաշինքը խախտող կերպարներ և որոշ շրջաններում ուժեղ հակազդեցություններ առաջացնել:

Առաջին՝ գերագույն իշխանության գործառույթը բնորոշվում է իր երկու ասպեկտով՝ «միարայական» և «վարունայական», որոնք փոխլրացման սկզբունքով մոդելավորում են աշխարհն իր երկյակ հակադրություններով՝ մոռ-հեռու, միավորող-տարանջատող, բարեկամական-թրշնամական, լուսավոր-մութ և այլն:

Հատկանշական է, որ ԱՊՀ ղեկավարների մեծամասնության մեջ գերակշռում է «վարունայական» ասպեկտը (ի հակադրություն եվրոպական և ամերիկյան ժողովրդավար երկրների, ուր «վարունայական» կողմը համարյա ամբողջությամբ մթագնված է):

4. Երկակի և ներքուստ հակասական է նաև դյումեղիլյան երկրորդ գործառույթը: Ինձմիկը կարող էր լինել միայնակ, միայն մահակով զինված, անկարգ կովող, կամ, ընդհակառակը՝ կարգով հանդես եկող, լավ զինված, արհեստավարժ կերպար (համապատասխանաբար՝ «Հերակլեսյան» և «աքիլեսյան» տիպեր): ԱՊՀ երկրներում այս հակադրությունը դրսերգում է ֆիդայական տիպի մարտիկների և արհեստավարժ բանակի հակադրությամբ:

5. Երրորդ գործառույթը հաճախ մարմնավորվում է մայր աստվածուհու՝ մեծ աստծու, արարչի կնոջ և դիցաբանական երկրորյակների կերպարներում, որոնցից մեկը հաղթելով մյուսին, մթագնում է նրա կերպարը և հասնում նոր կարգավիճակի (հմմտ. նոր ձևավորվող բուրժուագիտայի և աղքատացած զանգվածների հարաբերությունը):

6. Այս համադրությունները չեն նույնացնում ժամանակակից և արխարկ հասարակությունները: Ըստ Ժ.Դյումեղիլի, նրա տեսությունն առավելապես քննության մեջող է, և բերված համապատասխանությունների դրսերգումներն ակնհայտ են քաղաքական գործիչների

ելույթներում, վերլուծություններում, հոդվածներում, բանահյուսության մեջ և տարածվող լուրերում, որոնց նմանատիպ վերլուծությունը թույլ է տալիս նորովի իմաստավորելու որոշ պատմա-քաղաքական երևոյթներ:

## ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱԻ

### ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐԻ ԳԽՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

1. Հայաստանում աղքատության գործընթացի մեջ կարելի է առանձնացնել երկու փուլ՝ ա) համատարած աղքատության փուլ (մոտ 1992-1993 թթ.), երբ տնտեսական համընդհանուր ճգնաժամը ներառել էր հասարակության համարյա բոլոր խավերը, բ) կառուցվածքային աղքատության կազմավորման փուլ, որը սկսվել է 1994 թ. և այսօր էլ շարունակվում է; Վերջինիս հիմնական առանձնահատկությունը աղքատ դասի ձևավորումն ու առանձնացումն է ողջ հասարակությունից: 1993-1994 և 1996 թթ. Համաշխարհային բանկի կողմից ձեռնարկած հետազոտությունների ընթացքում հավաքած նյութերի քննությամբ կարելի է փաստել, որ աղքատությունը Հայաստանում շատ արագ ծնեց աշխարհընկալման միջարք առանձնահատուկ համալիրներ, որոնց բնորոշ է հայտնի ինքնուրույնությունը, հուզաբարոյական ծանրաբնոնվածությունը և ոեզրեակիվ գործոնի վերածվելու միտումը:

2. Արդեն 1993 թ. աշնանը, երբ ուսալ աղքատությունը Հայաստանում ուներ ընդամենը 1,5-2 տարվա պատմություն, այն ներկայանում էր ընկալումների հստակ ձևավորված մեխանիզմներով և հատուկ «փիլիսոփայությամբ»: Աղքատության բարոյական ճնշումը շատ ավելի առաջ էր անցել նրա ուսալ և նյութական ճնշումից: Մարդիկ հակված էին ներկայանալ շատ ավելի աղքատ, քան կային իրականում: Սեփական և հանրային աղքատության մասին հրապարակային ելույթները, աղքատության ցուցադրումը և նույնիսկ չափազանցումը համարյա հասարակական պահվածքի ձև էր: Այն հատկապես ցայտուն էր դրսերվում երկրաշարժի գոտում, ուր չափազանց ուժեղ էր համոզմունքը, որ մարդիկ իրենց աղքատության մեջ մեղավոր չեն: Սրան զուգահեռ, դեռևս 1993 թ. հնարավոր էր վավերացնել և մի այլ ընդհանրական ընկալում, որն ավելի բնութագրական դարձավ երկրորդ փուլում: Աղքատությունը դիտվում է ոչ թե տնտեսական, քաղաքական և այլ օրինաչափ կամ նույնիսկ պատահական հանգամանքների արդյունք, այլ անհատական

(ցեղային-տոհմային, ծագումնաբանական ևն) հատկանիշ (աղքատն աղքատ է իր խելքից, նա ծույլ է, նախանձ, ինքնասեր ևն): Այդպես է հակված մտածել բարեկեցիկ խավը և համայնքն ընդհանրապես: Նման մտայնությունը վեր է ածվում ուեալ մեխանիզմի՝ արդարացնելով բարեկեցիկների, պաշտոնյաների, համայնքի անտարեքրությունը դեպի աղքատները: Այս մեխանիզմի ծավալման հետևանքով աղքատության «ցուցադրությունը» աստիճանաբար զրկվում է հասարակական հնչողությունից, հանգեցնում է աղքատների մեկուսացմանը կամ ներգրավմանը զանազան կրոնական աղանդների մեջ, ուր դավանաբանական ձեւի կերպումները համարյա դեր չեն խաղում: Ընդհակառակը, մի շարք դեպքերում կարելի է վավերացնել վաղ քրիստոնեական համայնքներին բնորոշ մի շարք գծեր՝ կարեկցանք, անկեղծություն, ազնվություն, արդարություն, փոխօգնություն ևն:

3. Մերձավորաբելյան քաղաքակրթությունների, այդ թվում և հայերի համար լայն պատմական առումով աղքատությունը նոր երևույթ չէ, այն դարեր շարունակ եղան է կենսարների և աշխարհընկալման բաղկացուցիչ մասը: Հին Արևելքի ընդգծված հինրարիսիկ հասարակություններում աղքատությունը համարվում էր հոգեոր կարգի արատ: Քրիստոնեությունը, ծագելով որպես ճնշվածների և աղքատների աշխարհայացք, առաջ քաշեց և զարեր շարունակ քարոզեց լրիվ հակառակը՝ «աղքատությունը արատ չէ»:

Խորհրդային ժամանակների համար կարելի է վավերացնել աղքատության ընկալման երկու համալիր. ա) աղքատը հասարակության ամենաակտիվ և հեղափոխական ուժն է, բ) և, դրան հակադիր, գոյն 1960-ական թթ. տարածված էր աղքատության որոշակի քողարկում, եթե ոչ հարստության, ապա գոնե բարեկեցիկության որոշակի ցուցադրումով: Կարելի է ցուցել, որ ներկա ժամանակներում առաջին դրսեռումն ընդհանրապես բացակայում է, իսկ երկրորդն ավելի ընդգծված ձեռով արտահայտվում է երեխաների՝ հատկապես դպրոցականների շրջանում:

Այսպիսով կարելի է վավերացնել, որ աղքատության ոչ վաղ անցյալի ընկալումները միտում ունեն անհետանալու, մինչդեռ հնագույն ընկալումները «վերակենդանանում են», ցուցելով, որ հայ հասարակությունը վերջին տարիներին ընթանում է «սոցիալական» հասարակությանը հակադիր ուղղությամբ:

**ՀԱՅ ԿՆՈՉ ԻՐԵԱԼԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍՍԱԿԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ**

1. Կինը, որպես բնության կրող, երկակի բնույթ ունի: Մի կողմից նա բեղմնավորության ու արգասավորության մարմնացումն է, մյուս կողմից՝ սոցիալական հակողությունից գուրս մնալով, վերածվում է չարի, ձախի, կործանարար ուժի կրողի: Ստորև դիտարկում ենք կնոջ սեռական էներգիայի աշ՝ բարեբեր կողմի ազգային ընկալումը՝ անդրադառնալով հայուշու իդեալական մոդելին:

Ըստ իմաստի, կին բառը նշանակում է կողածին, եվայի դուստր, կողակից, կենակից, լծակից, զուգակից: Կինն Աստվածաշնչում հիշվում է «իբրև սիրելի և պատուական ընկեր և օգնական, ոչ թէ աղախին մարդուն... ստեղծեալ իբրև հարկաւոր ի լրացնել զմարդն» (Բառարան Սուլքը Գրոց, 1881, 276): Կին-տղամարդ երկեւեռ հակադրամիասնությունը հայոց մշակություն արտահայտում է «Համագործակցություն՝ հակագրությամբ» սկզբունքը (Վ.Ռ.Արսենև, 1991, 37): Հայոց ավանդությային ստերեոտիպի համաձայն, կնոջ սեռական վարքի համար առաջնահերթ դեր ունեն ամուսնությունն ու որդեննությունը, որով էլ հասարակական զիտակցության մեջ նա համապատասխանել է կանացիության կերպարի ըմբռնմանը: Դրանք են հայ կնոջ հետեւյալ գծերը՝ համեստություն, հնազանգություն, պարկեշտություն, անձնվիրություն, զսպվածություն, կրակորականություն ու պասսիվություն առօրյայում, հասարակական կյանքում և առանձնապես սեռական ոլորտում:

Կնոջ մասին ժողովուրդն իմաստախոսել է՝ «Կնկան շինածը՝ աստված չի շինե», «Կնիկը տղամարդի հոգին է» և այլն: Բարձր են գնահատվել նրա բնական գրավչությունը, տնարարությունը, աշխատափրությունը, յուրասիրությունը և այլն:

2. Սեռական վարքի այս իդեալական մոդելը, խորհրդային շրջանի որոշ շտկումներով հանդերձ, ավանդական կողմնորոշման հետևանքով, հիմնականում պահպանվել է և մեր օրերում: Հասարակությունը շարունակում է խրախուսել կանանց «Աստվածամայր» և «իննամակալ մայր» տիպերը, կանացիությունը համարելով սեռային իդեալի ամենաբնութագրական դիմ: Ըստ ժողովրդական պատկերացումների, կինը տան ներսի պատն է, տունը նրա «տարածքն» է, նրա գլխավոր խնդիրն՝ ընտանիքի, օջախի պահպանությունը, երեխաների խնամքն ու դաստիարակություն-

Նըն է, իսկ տղամարդով դրսի պատն է՝ ընտանիքի կերակրողն ու բարեկեցություն ապահովողը՝ «Երիկ մարդը՝ դուքս, վաստակը՝ ներս»:

3. Ներկա պայմաններում խորանում են ներանձնային և միջանձնային դերային հակասությունները: Հաճախ կնոջ վարքի վերաբերյալ իդեալականացված պատկերացումները չեն համապատասխանում սեռային ու եալ դերերին և կինը հայտնվում է բարոյա-հոգեկան երկվության մեջ, զգալով սոցիալ-մշակութային սուր անհարմարություն:

Գործազրկության և ոչ լրիվ աշխատանքային զբաղվածության պայմաններում, նոր սոցիալ-տնտեսական իրավիճակում, երբ քանդվում են նախկին կապերն ու հարաբերությունները, կինը որպես բնության կրող, կայունության ու ավանդութայնության սկիզբ, մեծավ մասամբ արագ է կողմնորոշվում և ենթադիտակցորեն վերադառնում ամենանախնական տնտեսածեկին՝ հավաքչությանը: Բնույթով այլակենտրոն՝ կինը, մայրը իր վրա է վերցնում ընտանիքի կերակրողի դերը: Մինչդեռ տղամարդը, որպես մշակույթի կրող, շոկային վիճակում է հայտնվում, կորցնելով երեխմնի գերը և հեղինակությունը: Կանանց մի մասը զբաղվում է մանր առևտրով, վերավաճառքով, զբոսաշրջիկային առևտրով և թեև առևտուրը տղամարդու մենաշնորհն է համարվում, առևտրի նշված ձևերը, ինչպես և մուրացկանությունը կարելի է դիտել հնէտիպային կենսաձևի՝ հավաքչության ժամանակակից տարատեսակներ: Կանանց մի խումբ էլ ելք է փնտրում նրանց հատուկ ամենահին զբաղմունքի մեջ:

Կինը կատարելով աղամարդու դեր, մնում է նույն կարգավիճակում ու, թեև որոշ առումով բարձրանում է նրա տնտեսական դերը, այնուհանդերձ, կնոջ վիճակը երկակի է դառնում, ինչը չի գոհացնում ոչ իրեն, ոչ էլ շրջապատին: Նման պայմաններում երբեմն տեղի է ունենում հասարակական ընկալման չափանիշի և իրականության խցում:

4. Անցման ժամանակաշրջանում կանանց որոշ մասը վեր է ածվում մարդինալ խմբերի՝ հայտնվելով սահմանային (կրիտիկական) վիճակում: Կանայք ստանձելով տղամարդու տնտեսական գործառությունը, ինչ որ առումով փոխառում են նրա արտաքին կերպարը: Այսպես, կանանց հագուստում նկատվում է այրականացման միտում, որը ոչ այնքան նորաձեռնության, դորձնականության, որքան սեռային դերերի փոխառման հետ է կապված:

ԿԱՆԱՆՑ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ  
ՄԾԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հստ վերջին տարիների սոցիոլոգիական հարցումների արդյունքների, առողջությունը հայերի սոցիալական կարեռագույն գերակայունություններից չէ, այն գրագում է ավելի ցածր հորիզոնականներ, քան այնպիսի սոցիալական արժեքներ, ինչպիսիք են ընտանիքը, կրթությունը և այլն: Դրանով հանդերձ, ժողովրդական առածն ասում է. «Առողջություն՝ սուլթանություն», «Առողջ լինեմ, Բաղդադ լինեմ» և յուրաքանչյուր փոշտոց ուղեկցվում է «առողջություն» բարեմաղթանքով: Առողջության նկատմամբ ազգային վերաբերմունքը դրսերվում է հետեւյալ ասույթում՝ «Հայը բժշկին դիմում է, որպեսզի չմնոնի, իսկ ոռուսը՝ որ բուժվի»: Իրավ, մեր օրերում էլ մարդիկ բժշկին դիմում են ծայրագեղ դեպքում, երբ առողջությունը վտանգված է: Նման վերապահ վերաբերմունքն առողջության նկատմամբ առավել սրվում է անցյան ժամանակաշրջանում, երբ շատ արժեքներ կորցնում են իրենց դերը և, որ գլխավորն է՝ մարդիկ անվճարունակ են դառնում: Սակայն մեր հասարակության ապագայի՝ երեխանների հիվանդության դեպքում արվում է անհնարինը՝ առողջությունը վերականգնելու, հիվանդությունը բուժելու նպատակով:

2. Կանանց տարբեր տարիքային խմբերի վերաբերմունքն առողջության, հիվանդության ընկալման նկատմամբ տարբեր է: Երիտասարդ մայրերն առավելապես մտահոգված են երեխանների առողջությամբ:

Զամունացած աղջիկները, կանայք հակված չեն խոսելու իրենց հիվանդությունների մասին և ավելի շատ հանդես են գալիս հիվանդատիրոջ կարգավիճակում: Ժողովուրդն ասում է, որ «Հիվանդը չէ հիվանդ, այլ՝ հիվանդատեր»:

Տարեց կանայք սիրով պատմում են իրենց հիվանդությունների մասին, սակայն մեծ մասամբ հարկադրված են կիսատ թողնել բուժման կուրսը:

Հղի կանանց խնամքի, սննդի հարցում լուրջ դժվարություններ են նկատվում: Նախկին պարտապիր այցելությունները տեղամասի գինեկողոցին չեն արվում. մի կողմէց նյութական, տրանսպորտային ինսդիրներ են առաջացել, մյուս կողմէց՝ վերացել է անաշխատունակության թերթիկի անհրաժեշտությունը, աճել է անվստահությունը բժշկության նկատմամբ և, որ պակաս կարեր չէ, ըստ ժողովրդական մտածողության,

վտանգավոր են համարվում ստուգումները պտղավորման առաջին ամիսներին:

Սահմանային իրավիճակում կանայք, որպես բնութենականի կրողներ, հաճախ են դիմում ավանդական կենսափորձին ու ժողովրդական հմտություններին: Որոշ վայրերում նկատվում է տանը ծննդաբերելու (ինչպես անցյալում էր) միտում, որը բացատրվում է թե՛ նյութական և, որ կարեռն է, տան բարոյա-հոգեբանական մթնոլորտի առանձնահատուկ պայմաններով. այդտեղ տաք է, չերս՝ ուղղակի և անուղղակի իմաստներով, կինը շրջապատված է յուրայիններով, քիչ է վարակի հնարավորությունը՝ ըստ բանասացների կարծիքի: Այստեղ ակնհայտ է յուրային-օտար, ընտանեկան-ընկերային հակադրությունը:

Ուշագրավ է, որ կանայք՝ սովորաբար նախապատվություն տալով բժշկուհիներին, ճգնաժամային իրավիճակներում (մասնավորաբեմ՝ ծննդաբերելիս), հակառակ ավանդական կողմնորոշմանը, գերադասում են տղամարդ գինեկոլոգների, գտնելով, որ վերջիններս ավելի հոգատար, նրբանկատ և արհեստավարժ են:

3. Հայոց մշակույթում առկա կանանց սեռական վարքի որոշ ինքնատիպ գծեր (մինչամուսնական կապերի բացառում, սեռային մաքրակրոնություն (պուրիտանիզմ), կուսության, ողջախոհության պահպանման պահանջ, կանանց ավանդաբար զսպված սեռական դերը, ինչ ենթադրում է զուգընկերող պահանջի բավարարում սոսկ), հանդեցնում է ներընտանեկան հարաբերությունների աններդաշնակության, հոգեկան խախտումների՝ որպես հետեանք ներքին ցանկությունների և արտաքին մշակութային արգելքների անհամապատասխանության: Դա այսպես կոչված «մշակութային սահմանափակման սինդրոմ է», որի արդյունքում ավելանում է ներողների, հոգեկան խախտումների, սթրեսների թիվը:

Հուրց գժվարություններ կան և հակաբեղմնավորման բնագավառում, եթե հին մեթոդները հուսալի չեն, նորերը՝ թանկ հաճույք են, ուստի խախտվում է հասարակության հիմքի՝ ընտանիքի աճի կարգավորման խնդրի լուծումը:

ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԱՂԵՑՅԱՆ ԾՐՁԱՆՈՒՄ  
(ԱԶԳԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԿԽԱՐԿԻ)

Էթնոսը, որպես սոցիալմշակութային ամբողջություն, զարգացման տեսակետից ինքնատիպ է՝ ըստ ազգային կայուն ավանդույթների, կրոնածիսական պատկերացումների, սովորույթների, հավատալիքների և տարբեր ազգերից ընդորինակած վարքի ձևերի: Սոցիալհոգեբանական տարաբնույթ դրսեորումներն իրենց արտահայտվածությամբ հանդես են գալիս նաև ներընտանեկան հարաբերություններում: Ազգային ավանդավարքի մեջ տարրորշում ենք ընտանեկան հարաբերությունների մոդելը, որը նրա մշակույթի մի մասն է: Ընտանեկան կառույցի ներսում եղրմնն բացահայտորեն, ավելի հաճախ ծածկագրված ձևով խտացված են տվյալ ազգի հոգեբանության մասնահատուկ կողմերը:

Ազգային սոցիալականացման գործընթացում առանձնացնում ենք աղետից հետո առաջացած ընտանիքի նոր տիպերը և ներընտանեկան հարաբերությունների տեղաշարժերը:

Ուսումնասիրությունները կատարվել են մասնավորապես հետևյալ ընտանիքների հետ. ա) լրիվ կազմով ընտանիքներ, բ) կորուստ ունեցող կամ վերակազմավորված ընտանիքներ, գ) եղակի ծնողով ընտանիքներ, դ) երկկողմանի որբ(եր)ով ընտանիքներ, ե) որդեկորույս ընտանիքներ, զ) որդեղիր ունեցող ընտանիքներ, չ) խնամակալ ունեցող ընտանիքներ, ը) հաշմանդամով ընտանիքներ, թ) միայնակ ծերերի ընտանիքներ, ժ) մեկ անձով ընտանիքներ, ժա) օտարպատ անձով ընտանիքներ, ժբ) օժևան կորցրած ընտանիքներ, ժգ) զոհված աղաստամարտիկի ընտանիքներ, ժդ) տարաբնույթ աղանդների հետևող անձանց ընտանիքներ:

Մեր խնդիրն է առանձնացնել «վերակազմավորված ընտանիք» տիպը՝ դիտելով իրեւ վերակազմավորվող հարաբերությունների տեսակ՝ կայուն և մշտական, փոփոխվող կողմերով, միասնական արժեքային կողմնորոշումներով: Տվյալ դեպքում, նկատի ունենք ընտանիքում կազմավորվող նոր հարաբերությունների բնույթի ընկալումը յուրաքանչյուր անդամի կողմից:

Վերակազմավորված ընտանիքի մոդելը կառուցվում է ամբողջական հարաբերություններ պահպանելու, ներընտանեկան դերային կարգիճակ հաստատելու և ավանդական փոխհարաբերությունները նոր ձևի մեջ դնելու սկզբունքով:

Վերը նշված մողելի հիմքում ընկած են ազգահոգեբանական կայուն և փոփոխվող հարաբերություններ: Ուսումնամիջրությունները ցույց են տալիս, որ սկզբնական փուլում գերակշռող նախկին կայուն հարաբերությունների պահպանումն է, որը պայմանավորված է սոցիալ հարմարման գործընթացի բարդություններով, ինչպես նաև անհատական առանձնահատկություններով:

Մեր յանդիրն է ստեղծել Հոգեբանական նոր փոխհարաբերություններ, առաջադրել հարմարվողական և փոխհատուցողական մեխանիզմներ, ինչպես նաև մանրամասն ուսումնասիրել աղետից հետո սահմանային Հոգեվիճակում գտնվող անհատների հոգեբանական-պաշտպանական գործուները:

Էթնոհոգեբանական վերականգնողական աշխատանքների փուլ:

1. Նոր հարաբերությունների մողելի ստեղծում: Հետաղեայան ըրբանի ընտանիքների համար կարևորել ենք այնպիսի հարաբերությունների վերականգնումը, որոնք օգնել են անձին մտնելու հոգեվիճականգնուման գործընթացի մեջ: Այս պարագայում ցուցաբերել ենք յուրատիպ, անհատական և շերտավորված մոտեցումներ, անհատական սոցիալՀոգեբանական, տարիքային, տարիքասեռային առանձնահատկությունների հառվառմամբ: Հոգեվիճականգնողական, սոցիալ վերականգնման ուղղությամբ աշխատանքների արդյունավետությունը մեծապես պայմանավորված է աղետայլ անձի համակողմանի ճանաչումով, նրա վրա աղետի ունեցած հոգեբանական հետեանքների իմացությամբ: Անձի սովորութային կենցաղում ավանդակարգերը, տոները, ծեսերը՝ իրեւ ազգաբանական պաշտպանական մեխանիզմի դրսերման ձևեր, օժանդակում են հարմարման գործընթացին:

2. Ուսումնասիրել ենք տարածաշրջանի բնակչության սովորույթները, դիտարկվող ընտանիքների կրոնածիսական պատկերացումները:

3. Քննել ենք ընտանիքի յուրաքանչյուր անդամի հոգեբանական, տիպաբանական առանձնահատկությունները (խառնվածք, բնավորություն, հույսեր, զգացմունքներ, կամք, հիշողություն, մտածողության առանձնահատկություններ):

4. Սոցիալական դիրքորոշումներ (սոցիալ հարմարում, ընդօրինակման առանձնահատկություններ՝ համանման կորուստներ ունեցող անձանց հետ):

5. Անձնային և ազգային հատկանիշների առանձնացում: Այս փուլում նպատակահարմար է անձնային հիմնահարցերի հավասարակշռումը և իմաստավորումը՝ մարդու նկրքին հնարավորությունների անսահմանափակության սկզբունքի հաշվառմամբ (իրականում գոյություն չունեն զգայական փակուղիներ): Ծնորհիվ այս սկզբունքի, առաջարկում ենք

վերանայել իրադրության սուբյեկտիվ ընկալումները՝ առաջադրելով դրական մտադրությունների հակվելու միտում՝ ազգային արժեքային համակարգի մոդելի (մշակույթ, ծես, սովորույթ) գերակայմամբ:

## ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱԻ

### ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹԹՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

1. Կրթական բնագավառում բարեգործությունը հարուստ ավանդույթ ունի հայոց մեջ: Խեռան 1876 թ. Արևմտյան Հայաստանում զղպոցներ պահելու համար Հիմնվեց «Արարատյան ընկերությունը», կրթական նույն նպատակներն ունեին «Կիլիկիա» և «Դպրոցասիրաց Արևելյան» ընկերությունները, որոնք ոռուսահայերի մեջ հանգանակություններ կատարելով կրթել են հայոց գաֆառների երեխաններին: Հետագայում, այս երեք ընկերությունները միավորվեցին «Միացյալք ընկերություն Հայոց» միության մեջ:

2. XIX դարի վերջներին Կովկասի նշանավոր հայ այրերը որոշեցին ստեղծել բարեգործական մի ընկերություն, որը պետք է աջակցեր Կովկասի տարածքում հայկական դպրոցների Հիմնման, ուսումնական օջախների նորոգման, կարիքավոր երեխանների և ուսուցիչների օգնության, լավագույն երեխաններին նույսատան կամ նվրոպա ուսման ուղարկելու և այլ աշխատանքներին:

1881 թ. Թիֆլիսում հիմնվեց «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը», որը գոյատեսեց մինչև 1911 թ.: «Ընկերության» խորհուրդը ղեկավարում էին ժամանակի հանրահայտ այրերը, որոնց թվում էին Գ. Սունդուկյանը, Ա. Մանթաշյանը, Ա. Սպանդարյանը, Բ. Նավասարդյանը և այլք: Հստ «Ընկերության» կանոնագրության, մշտական անդամներ կարող էին լինել 300 ոռուբուց ոչ պակաս մուծողները: Հավաքված գումարը համարվում էր անշարժ դրամագլուխ: «Ընկերության» գործունեության առաջին տարիներին մասնաճյուղեր բացվեցին Կովկասի հայաշատ բնակավայրերում: Բարեգործական այս կազմակերպությունը, երեսնամյա իր գործունեության ընթացքում անմիջական ղեկավարն ու մասնակիցը գործակ հայանպաստ շատ աշխատանքների: Բավական է նշել, որ բացի հիմնական կրթա-լուսավորչական բարեփոխումներ իրագործելուց, «Ընկերությունը» զբաղվում էր նաև հայ բնակչության անապահով խավերի ի հայտ բերման ու բազմակողմանի օգնություն հասցնելու խնդիրներով: Կազմակերպությունը զգալի ավանդ ու-

Ներ Կովկասի տարածքում համաճարակի կամ սովոր ժամանակ աղետյալ-ներին օգնելու, ինչպես նաև XIX դարի վերջերին արևմտահայ գաղղականներին օթևան հատկացնելու, այդ նպատակով Հանգանակություններ կատարելու, նպաստներ բաշխելու գործերում:

3. Իսկ ինչպիսի՞ն է վիճակը այժմ, ավելի քան մեկ դար անց: Բարեգործությունը գտնվում է դեռևս սաղմնային վիճակում, կրթությանն օգնել ցանկացող անհատ-բարեգործերի կամ կազմակերպությունների թիվը քիչ է, անցումային կոչված այս շրջանում պետության կողմից կրթության համակարգի բարեփոխումների համար հատկացվող միջոցները բավարար չեն և այդ առաքելությունը գերազանցապես կատարում է Համաշխարհային բանկը, որն էլ այս բնագավառում կիրառում է իր մեթոդներն ու ծրագրերը, հաշվի չառնելով 1996 թ. իր իսկ պատվերով մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Այս պարագայում կրթօջախների վերանորոգման, տաքացման, դասագրքերի ձեռք բերման հոգսերը հիմնականում ընկած է ծնողների ու տվյալ թաղամասի անհատ-բարերարների ուսերին: Նախատեսվում է, որ հետագայում կրթության բոլոր հարցերով պետք է զբաղվի թաղապետարանը: Սակայն, կրթության բարեփոխումների հարցում այնուամենայնիվ չկա հստակություն: Որպես օրինակ, նշենք այն փաստը, որ երեան քաղաքի բոլոր դպրոցները ենթարկվում են քաղաքապետարանին, սակայն նրանք հաշվետու են տվյալ համայնքի կրթության բաժնին, այսինքն այստեղ առկա է կրկնակի ենթակայություն, որը ոչ մի լավ արդյունք չի կարող տալ:

## ԿԱՌԱԵՆ ՍԵՂԲՈՍՑԱՆ ՀԱՒ

ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԲՆՈՒԹԹԸ ԳՈՒՄՐԻՈՒՄ

1. Պատմական կումայրիկ և ներկայիս Գումրիի միջև ընկած հակայական ժամանակահատվածում հիշյալ բնակավայրի ու հետագա քաղաքի բնակչության կենցաղի բոլոր ասպարեզներում առաջացել և ձևավորվել են յուրահատուկ ավանդույթներ: Հայկական էթնոսի ավանդական կենցաղի արգասիք լինելով, սրանք, համապատասխան տվյալ շրջանի տնտեսությանը, կենցաղային մշակութին, ընթացիկ տարիների ընդհանուր իրապայմանների թելադրանքին, զարգացել են յուրովի: Հայտնի է, որ պատմական իրադարձությունների բերումով տեղի ունեցած բնակչության տեղաշարժերի, ազգագրական և այլէթնիկ խմբերի վերաբնակեցումների և այլ փորձությունների հետեւանքով գրեթե բոլոր

պատմապատճենական շրջանների բնակչության ավանդական կենցաղը ենթարկվել է վերափոխությունների: Հատկանշական է այդ տեսակետից նաև Շիրակը, մասնավանդ՝ Ալեքպոլ-Լենինականը, որի գլխով անցած փորձությունների մեծամիջությունը հիշելը բավական է պատկերացնելու, թե ինչ ցնցումների է ենթարկվել քաղաքի բնակչությունը երկու դարից էլ պակաս ժամանակաշրջանում: Սակայն, այս ամենից հետո, կյանքը նորից մտել է իր հունի մեջ, վերականգնվել է յուրահատուկ կենցաղը՝ եղած ավանդույթների երբեմն վերափոխված արտահայտություններով:

2. Որևէ ավանում կամ քաղաքում բնակչության նորովի վերակադրմագործան, նրա կենցաղի զարգացման բնորոշ գծերի հետագոտությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ավանդութային կենցաղի առավել կայուն այն բաղադրամասերը, որոնք, մյուս նորայնացված բաղադրամասերի հիմքում, կրում են էթնիկ հիմնական բեռնվագծությունը: Գումրիի ավանդույթների մեջ կատարված և կատարվող վերջին փոփոխությունները կապված են 1988 թ. աղետավի երկրաշարժի, այնուհետև տեղի ունեցած քաղաքական, տնտեսական իրադարձությունների հետ: Փոփոխությունների մի մասը կրնց ժամանակավոր, անցողիկ բնույթ և ընկրկեց հաստատուն ավանդույթների առջև, իսկ մյուս մասն էլ, հարմարվելով նոր իրապայմաններին, սկզբում շերտավորվեց, հետո էլ միաձուլվեց եղածի հետ՝ նոր երանգ տալով ավանդութայինի հիմնակմախքին: Հետեւ ավանդույթների փոփոխման բնույթին՝ կարելի է նշել, որ թե՛ երկրաշարժը, թե՛ նոր տնտեսաձեխն անցնելու ընթացքը զգալապես անդրադարձան և անդրադառնում են արդի կենցաղի ձևավորման վրա: Կենցաղի տարբեր ոլորտներում կատարված փոփոխությունները նշանակալիրեն ներազեցին որոշ իմաստով արդեն հաստատուն դարձած ընդհանուր կենցաղի վրա՝ երբեմն խարխելով ու վերացնելով կարծես մնայուն համարվող ծեսեր ու սովորույթներ, իսկ երբեմն էլ վերականգնելով արդեն մոռացված ավանդույթներ: Ավանդույթների և սովորույթների մեջ դիտվում են նաև այնպիսի փոփոխումներ, որոնք հնի և նորի երբեմն ոչ ներդաշնակ սինթեզումն են:

3. Գումրիի (և ոչ միայն նրա) բնակչության մեջ նկատվում է կենցաղի և մշակույթի վերընձյուղման երկխություն: Կյանքի բոլոր բնագավառուներում որոշակիորեն պահպանվում, նույնիսկ յուրահատուկ դարգացում է ապրում ավանդականը, որի հետ համաձաւլվում է ժամանակակիցը: Սակայն արդի կենցաղի շատ տարբեր միայն շղարշ են ավանդականի շուրջը, որ ժամանակի ընթացքում կարող են փոխարինվել ուրիշներով: Հաստատուն է մնում այն, ինչ բխում է տվյալ էթնիկ ընդհանրության խորքային նկարագրից:

ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ  
ՀԱՅՈՒԹՅԱՆ ԾՐՁԱՆՈՒՄ

1. Հստ պաշտոնական տվյալների, ներկայումս թուրքիայի ամենամարդաշատ քաղաքում՝ Ստամբուլում հաշվվում է շուրջ վաթուն հազար հայ, իսկ գալառներում՝ հինգ հազար: Թուրքիայի հայության կրոնական, կրթական, բարեգործական, գրական և գեղարվեստական կադմակերպությունները հենվում են Հայոց Պատրիարքության (Հիմնադրվել է 1461թ.) և նրան ենթակա կազմավորումների վրա, որոնք իրենց կենտրոնակությունն ու նպատակամդղվածությունը պահպանում են ժամանակների ներկայացրած առավել կամ նվազ թույլատու պայմանների համամատությամբ:

2. 1996-97թ. կատարված դիտարկումների ժամանակ, մեր խնդիրն է եղել թուրքիայի հայ համայնքի սոցիալական տարրեր շերտերի և սեռատարիքային տարրեր խմբերի ներկայացուցիչներից դրի առնել ժողովրդագիտական նյութեր, դիտարկել, թե քանակական ու որակական ինչպիսի՞ փոփոխություններ են կատարվել, ինչպիսի՞ն է ներկայիս թուրքիայի հայոց, մասնավորապես՝ պոլսահայոց հոգևոր-մշակութային կյանքի պատկերը: Այլ կերպ ասած՝ շոշափել թուրքիայի հայության դեռևս բարձրող զարգերավոր, ուսումնասիրել նրա հույգերն ու մասուրումները: Սրանք հաբախ են, որոնք որոշ չափով պարզաբանվեցին մեր ժողովրդագիտական դիտարկումների լնթացքում և բանահավաքչական բազմաժանր և բազմաթիվ գրառումների շնորհիվ:

3. Գրի առնված նյութերի մեջ կան պատմական բնույթի կարերը արմեք ներկայացնող ավանդություններ, խոհափիլսովայական հեքիաթներ, դաստիարակչական պատմվածքներ, թուրքիայի տարրեր դավառների հայերին բնութագրող զրույցներ, անեկդոտներ, առավելներ: Տարաբնույթ երգերից բացի, գրի են առնված խորիմաստ առած-ասացվածքներ, պատկերավոր օրհնանք-անեծքներ ու թևավոր խոսքեր, ինչպես նաև մկրտության, հարսանիքի և թաղման արարողական ծիսակարգերի նկարագրություններ: Առանձին շարք են կազմում նաև պոլսահայ ինքնատիպ ճաշատեսակների և անուշեղենների բաղադրատոմսերը:

**ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ԵՆԹԱԷԹՆԻԿ ԽՄԲԻ  
ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ 1920-1940-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

1. Հայոց ենթաէթնիկ խմբերի ուսումնասիրության հարցը, որպես հետազոտության ուրույն առարկա, վերջերս է մասնագիտական ուշադրության արժանացել: Այս առումով առավել ուշագրավ է հայրենադարձների ենթաէթնիկ խմբի ձեւավորման խնդիրն իր յուրահատկությամբ ու հարակից հարցերով:

2. Հայ պատմագիտության մեջ մինչև այժմ եղած ուսումնասիրություններում հայրենադարձության հարցը դիտարկվել է հայրենիք-սփյուռք առնչությունների, հայ գաղղօջախների, ներգաղթի նախապատրաստման ու կաղղամակերպման խնդիրների հետ կապված: Սակայն, հայրենադարձումից հետո ներգաղթածների կյանքի, նոր պայմաններին ու միջավայրին հարմարվելու-ընտելանալու (այդ գործընթացի փուլային անցումներով), տեղացի տարրի հետ շփվելու (ինչպես և ներգաղթած տարրեր խմբերի միմյանց հետ շփվելու), երրեմն ուղղակի հակադրության և դրանց հետ կապված բազմաթիվ հարցեր, որոնք տվյալ ենթաէթնիկ խմբի ձեւավորման նախապայման են հանդիսացել և ազգագրական առումով հետաքրքրություն են առաջացնում, երբեք չեն շոշափվել:

Այսինչ տեղի էր ունենում միևնույն ժողովրդի երկու մեծ հատկածի՝ արևմտահայերի (որոնց մեջ ավելի փոքր ենթաէթնիկ խմբեր կային՝ ըստ բնակած երկրի, ինչպես՝ ֆրանսահայեր, բալկանյան հայեր, լիբանանահայեր և այլն) ու արևելահայերի միավորում հայրենիք համարվող մի փոքրիկ տարածքում, որը 1920-ականներին արդեն իսկ պատմագրական տարրեր շրջաններից գաղթած խմբերի խառնարան էր ներկայացնում:

3. Հայրենադարձների ենթաէթնիկ խմբի ձեւավորումն ընթանում էր հայրենադարձության առանձին փուլերին զուգահեռ:

1920-ական թվականներին ներգաղթածները, որոնք տակավին հիմնավորապես չէին հաստատվել որևէ երկրում, հետևաբար և զերծ լինելով այլէթնիկ մշակույթի աղդեցությունից, հավատարիմ էին ավանդական ազգայինին: Հայրենիքում նրանք հիմնեցին իրենց բնօրբանի անվանումը կրող թաղամասեր, ավաններ (Նոր Արաքիլը, Նոր Արեց, Նոր Խարբերդ և այլն), այսպիսով ստեղծելով բնակեցման լոկալ օջախներ և հիմք դնելով տվյալ ենթաէթնիկ խմբի ձեւավորման:

4. 1946-1948/49 թթ. մեծ հայրենադարձության ներգաղթողները ներկայացնում էին երկու սերունդ՝ ավագ, որ հիշում և կարուտում էր բնօրրան-հայրենիքը և կրտսեր՝ նրանք, ովքեր ծնվել էին արտասահմանում ու լսել էին միայն հայրենիքի մասին: Այս փուլի հայրենադարձները, նախորդի համեմատությամբ ունեին կենցաղա-մշակութային շեշտված տարբերություններ՝ կրելով նաև տվյալ երկրի էթնիկ մշակույթի ազդեցությունը:

5. Հայրենադարձության այս փուլում շարունակվում ու նոր թափ է առնում վերոհիշյալ ենթաէթնիկ խմբի ձևավորումը, ինչին խթանող պատճառներից էին՝ հայրենիքի և իրենց բնակած երկրի տնտեսա-քաղաքական համակարգերի տարբերությունից առաջացած բարոյա-հոգեհրանական բարդույթը, կենցաղա-մշակութային առանձնահատկությունները, լոկալ բնակեցմամբ աղապտացիոն շրջանը հաղթահարելու անհրաժեշտությանն ուղղված ճիգերը, ի վերջո՝ իր բուն իմաստից հեռացած յուրօրինակ «էթնոնիմի» վերածված «ախսպար» անվանումը, որը գործուն է առ այսօր, ամենատարբեր դրսեւորումներով:

ԳՈՀԱՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ  
ՀԱԽԻ

### ՏՈՆԸ ՀԱՅ ՀԱՆՐՈՒԹԹԻ ԱՐԴԻ ԿՑԱՆՔՈՒՄ

1. Տոնը հասարակության կյանքի կաղմակերպման կարևորագույն ոլորտներից է: Որպես այդպիսին՝ այն ուղեկցել է մարդկության կյանքի ողջ ընթացքին:

2. Հարուստ և հետաքրքիր է հայոց ավանդական տոնական համակարգը: Ինչպես ցույց են տալիս XIX դարի վերջի - XX դարի սկզբի նյութերը, տոնը նշանակալի տեղ է զբաղեցրել սովորութային իրավունքի չափանիշներով վերահսկվող հայ հանրույթի կյանքում: Հայոց տոնական համակարգը կրում է տոնի կառուցվածքի բոլոր գլխավոր բաղադրիչները՝ զանգվածայնություն, տրամադրության ընդհանրություն, աղատություն, ուրախություն, տոնական ուտեսատի առատություն:

3. Հայաստանի Հանրապետության արդի տոնական կյանքը ներկայացնում է այլ պատկեր: Այսօր կարելի է առանձնացնել տոնների երկու խումբ. ա) ավանդութային-ժողովրդական (նոր տարի, ս. Ծնունդ, ս. Սարգիս, Տեառնընդառաջ, Մարգարեղ, Զատիկի, Համբարձում, Վարդավառ, Խաղողօրհնեք, ս. Խաչ) և բ) նորօրյա հասարակական-քաղաքական (Մայրության և գեղեցկության, Հաղթանակի և խաղաղության,

Առաջին Հանրապետության տոներ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օր, Հայաստանի անկախության օր):

4. Ավանդութային տոների մի մասն այսօր դրսելորում է գտնում երբ բնեմնի հարուստ ծխաշար ունեցող տոնի միայն հիմնական, կենտրոնական ծեսի մեջ (ա. Սարգիս, Տեառնընդառաջ, Զատիկի, Վարդավառ): Մի մասն էլ վեր է ածվել զուտ կրոնական, եկեղեցական հանդիսության, որն իրականացվում է բացառապես եկեղեցական արարողության շրջանակներում (ա. Ծնունդ, Մաղկաղարդ, Համբարձում, Խաղողօրհնեք): Այսինքն, ավանդական տոները չեն կատարում իրենց լիարժեք և իրական դերն արդի կյանքում:

5. Բայց նման դեր չեն կատարում նաև նորահաստատ տոները: Դրանք չեն վայելում այն ժողովրդականությունը, չեն ստեղծում մասնակիցների և արամադրության այն համընդհանրությունը, հասարակության ներդաշնակությունն ու համերաշխությունը, որոնք, ինչպես նշվեց, կազմում են տոնի հական բաղկացուցիչները: Դրանք ավելի շատ պաշտոնական հանդիսություններ են, քան զանգվածային, համաժողովրդական տոնախմբություններ:

Նարելի է ասել, որ ժամանակակից տոնական համակարգը չի զբաղեցնում իր շատ կարևոր և ուրույն տեղն արդի հասարակական կենցաղում, ուստի վերանայման, ճշգրտման ու հստակման կարիք ունի, ինչը կկատարվի ժամանակի ընթացքում:

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

- Արրահամյան Հնո՞ւմ (ՀԱԻ) Հիմ առասպելաբանական կերպարների նոր կյանքը. 1. Լեճինը որպես տրիբունը** 3
- Արրահամյան Լ.նո՞ւ, Գոլյան Արա, Մարտիրյան Հարություն, Շագոյան Գայանե, Պետրոսյան Համլետ (ՀԱԻ) Հայ շուկաի ազգագրություն. մի քանի հարցադրում** 5
- Անտոնյան Յովիհա (ԵՊՀ) Հասարակության հոգեբանական ինքնակարգավորման որոշ ավանդական մեխանիզմները** 6
- Գարբիելյան Միհիթար, Դարբաղյան Արտակ (ԵՊՀ) Քաշաթաղի շոշանի վերաբնակեցման գործընթացը** 8
- Գարբիելյան Միհիթար (ԵՊՀ) Գյուղատնտեսական գբաղմունքներում հողի սեփականաշնորհումից հետո կատարված որոշ փոփոխությունների մասին** 10
- Գալստյան Միհիթար (ՀԱԻ) Բնակչության տեղաշարժները Հայաստանի Հանրապետությունում (ըստ 1990-1996 թթ. էթնուցիոնգիական հետազոտության նյութերի)** 11
- Գալստյան Միհիթար (ՀԱԻ) ՀՀ դպրոցահասակ երեխաների աղքատության բնութագրիչների որակական գնահատումը (ըստ 1994-1996 թթ. դաշտային ազգագրական նյութերի)** 13
- Դոլժենկո Իրիմա (ՀԱԻ) Գյուղական տոնները Հայաստանի ասուրիների արժեքային կողմնորոշումների համակարգում** 14
- Թաղեռսյան Աղասի (ՀԱԻ) Դպրոցահասակ երեխաների գեղագիտական դաստիարակության պրոբլեմները Հայաստանում** 16
- Հորոսյան Սույրեն (ՀԱԻ) Գոյատևում-96 (ըստ Տավուշի մարզի սահմանամերգ գյուղերի դաշտային նյութերի)** 17
- Մարտիրյան Հարություն (ՀԱԻ) Վարդենիսի շրջանի հայության ներկրծիկ խմբերը. փոխարարելության հարցեր** 18
- Մարտիրյան Հարություն (ՀԱԻ) Ղարաբաղ-Հայաստան փոխարարելություններն ըստ Ղարաբաղյան շարժման ցուցապատճերի** 20
- Մարտիրյան Հարություն, Գաբրիելյան Միհիթար (ՀԱԻ, ԵՊՀ) Գյուղատևում-94 (ըստ Վայքի և Գորիսի շրջանների նյութերի)** 22
- Մելիքյան Սուսան (ՀԱՊԹ) Ազգային-պետական տոնացուցիչ ձևավորման խնդիրն անցման ժամանակաշրջանում** 24
- Մկրտչյան Սամվել (ՀԱԻ) Տոնածիսական համակարգը և կրոնական գործոնը** 25
- Ծագոյան Դայամե (ՀԱԻ) Օպերատորը իբրև հայկական հարսակիքի նոր պերսոնաժ** 27

<b>Պետրոսյան Արմեն (ՀԱԻ)</b> Առասպեկտաբանական արքետիպեր Անկախ պետությունների համագործակցության ժողովուրդների քաղաքական ընկալումներում	29
<b>Պետրոսյան Համետ (ՀԱԻ)</b> Աղքատության ժամանակակից և ավանդական ընկալումների համադիր քննության փորձ	31
<b>Պողոսյան Սվետլանա (ՀԱԻ)</b> Հայ կնոջ իդեալը և սոցիալ-տնտեսական դերերի փոփոխությունն աճցման փուլում	33
<b>Պողոսյան Սվետլանա (ՀԱԻ)</b> Կանանց առողջության խնդիրներ և մշակութային առանձնահատկություններ	35
<b>Սահակյան Կարինե (ԳՄԻ)</b> Վերակազմավորված ընտանիքների տիպաբանական առանձնահատկությունները հետադեսյան շրջանում (ազգահոգեբանական ակնարկ)	37
<b>Սարգսյան Համլետ (ՀԱԻ)</b> Բարեգործական ավանդույթները և կորթական համակարգի բարեփոխումների որոշ հարցեր	39
<b>Սեղրոսյան Կառլեն (ՀԱԻ)</b> Ավանդույթների վերափոխման բնույթը Գումրիում	40
<b>Սկազյան Վերժին (ՀԱԻ)</b> Ժողովրդագիտական դիտարկումներ Թուրքիայի հայության շրջանում	42
<b>Ստեփանյան Արմենուին (ՀԱԻ)</b> Հայրենադարձների ենթակրօնիկ խմբի ձևավորումը 1920-1940-ական թվականներին	43
<b>Ստեփանյան Գրիգոր (ՀԱԻ)</b> Տոնը հայ հանրույթի արդի կյանքում	44

## СОДЕРЖАНИЕ

<b>Абрамян Левон (ИАЭ).</b> <i>Новая жизнь древних мифологических образов: 1. Ленин как трикстер</i>	3
<b>Абрамян Левон, Гулян Ара, Марутян Арутюн, Петросян Гамлет, Шагоян Гаяне (ИАЭ).</b> <i>Этнография армянского рынка: к постановке вопроса</i>	5
<b>Антонян Юлия (ЕГУ).</b> <i>Некоторые традиционные механизмы психологического самоурегулирования общества</i>	6
<b>Габриелян Мхитар, Дабагян Аtrak (ЕГУ).</b> <i>Процесс заселения Кашатахского района</i>	8
<b>Габриелян Мхитар (ЕГУ).</b> <i>О некоторых изменениях в сельскохозяйственных занятиях, имевших место после приватизации земли</i>	10

Галстян Мигран (ИАЭ). Перемещения населения в Республике Армения (по материалам этносоциологического исследования 1990-1996 годов)	11
Галстян Мигран (ИАЭ). Качественная оценка признаков бедности детей школьного возраста в РА (по полевым этнографическим материалам 1994-1996 годов)	13
Долженко Ирина (ИАЭ). Сельские праздники в системе ценностных ориентаций ассирийцев Армении	14
Марутян Арутюн (ИАЭ). Субэтнические группы среди армян Варденинского района: вопросы взаимоотношения	18
Марутян Арутюн (ИАЭ). Взаимоотношения Карабаха и Армении по материалам транспарантов и плакатов Карабахского движения	20
Марутян Арутюн, Габриелян Мхитар (ИАЭ, ЕГУ). Выживание-94 (по материалам Вайкского и Горисского районов)	22
Меликян Сусан (ГМЭА). Проблема формирования национально-государственных праздников	24
Мкртчян Самвел (ИАЭ). Ритуально-праздничная система и религиозный фактор	25
Обосян Сурен (ИАЭ). Выживание-96 (по полевым этнографическим материалам приграничных сел Тавушской области)	17
Петросян Армен (ИАЭ). Мифологические архетипы в политических воззрениях народов СНГ	29
Петросян Гамлет (ИАЭ). Опыт сопоставительного анализа современных и традиционных восприятий бедности	31
Погосян Светлана (ИАЭ). Идеал армянской женщины и изменение социально-экономических ролей в переходный период	33
Погосян Светлана (ИАЭ). Проблемы, связанные со здоровьем женщин, и культурные особенности общества	35
Саакян Карине (ГПИ). Типологические особенности заново сформированных семей в период после землетрясения (этнопсихологический очерк)	37
Саркисян Гамлет (ИАЭ). Традиции благотворительности и некоторые вопросы реформирования системы образования	39

Свазлян Вержине (ИАЭ). Этнографические наблюдения среди армян Турции	42
Сехбосян Карлен (ИАЭ). Характер изменения традиций в Гумри	40
Степанян Арменуи (ИАЭ). Образование субэтнической группы репатриантов армян в 1920-1940-е годы	43
Степанян Гоар (ИАЭ). Праздник в жизни современного армянского общества	44
Тадевосян Агаси (ИАЭ). Проблема искусствоведческого воспитания детей школьного возраста в Армении	16
Шагоян Гаяне (ИАЭ). Оператор - новый персонаж армянской свадьбы	27

### Հապավումներ

ԳՄԻ - Գյումրիի մանկավարժական ինստիտուտ

ԵՊՀ - Երևանի պետական համալսարան

ՀԱՊԹ - Հայաստանի ազգագրության պետական թանգարան

ՀԱԻ - ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

### Сокращения

ГМЭА - Государственный музей этнографии Армении

ГПИ - Гюмрийский педагогический институт

ЕГУ - Ереванский государственный университет

ИАЭ - Институт археологии и этнографии НАН РА



Պատվեր 155:

Տպաքանակ 100:

---

Տպագրված է «Դավիթ» կոռագերատիվի տպարանում:  
Երևան, Տերյան 72:

[38011]

A II  
84611

